



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

15970

322

R-55

1902

Проф. И. Бердниковъ

ՊՐՈՖ. Ի. ԲԵՐԴՆԻԿՈՎ

# ՆՈՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԿՐՈՆԸ

ՌՈՒՍԵՐԷՆՆԵ ԹՈՐԳԱՆԵՑ ԿԵՐԳ ԱԼՔՈՒՆԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՄԲ Ս. ՏԵԳՐԱՆԵԱՆԻ:

ԱՂԷՔՍԱՆԳՐԱՊՈՒ

Արագաժիպ-սպարան Սանդեանի և Ասեփանեանի

322 01 MAR 2013

15 JAN 2010

26 SEP 2006

P-55 *uf*

Проф. И. Бердниковъ. ՊՐՈՖ. Ի. ԲԵՐԴՆԻԿՈՎ

*№ 9363*

# ՆՈՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊՈՒ ԿՐՈՆԸ

1009  
11484



~~ՈՒՍԵՐԵՆՆՑ ԹԱՐԳՄԱՆՆԵՑ~~



Ս.Լ.ՔԱՆԿԻՐԱՊՈՒ

Արագատպ-սպասան Սանդեանի և Ասեփանեանի

Скоропечатня Саноянца и Степанянца.

1902


*5-2  
2-2*

13 2 JAN 2013  
2 8 SEP 2013

15970  
01 MAR 2013

LIBRARY  
UNIVERSITY OF TORONTO

Дозволено цензурою, 14-го Февраля 1902 г. Тифлисъ.



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Փարզմանութեան համար պրոֆ. Բերդիկովի այս բրոշուրը ընտրելու պատճառը այն չէր, որ մեր կարծիքով այս լաւագոյնը լինէր նոյն խնդրին վերաբերեալ գրականութեան մեջ.— ոչ էլ այն, որ մենք համաձայն լինեինք գիտնաւոր հեղինակի անձնական համոզմունքներին: Լաւագոյն չը համարելով, մենք այս բրոշուրը յարմար դասեցինք, որպէս համառօտ, պարզ, առանց խրքնութիւնների շարադրուած մի գրուածք, որտեղ գլխաւորապէս նկարագրուած, շարադրուած են այն դրական կարգերը եւ օրէնքները, որով պայմանաւորուում եւ ձեւաւորուում են եկեղեցա-պետական յարաբերութիւնները արդի Բաղաճակիւր ազգերի կեանքում: Նոյն խնդրին նուիրուած կան շատ լուրջ հիմնաւոր հեղինակութիւններ — մանաւանդ գերմաներէն լեզուով. սակայն դրանք պահանջում են ընթերցողից որոշ իրաւաբանական եւ պատմաբանական պատրաստութիւն. իսկ մեր նպատակն էր այս դեպքում — մի հանրամասչելի գրուածք հրատարակել:

Պրոֆ. Բերդիկովը առաջ է բերում նաեւ իւր սեփական ֆենադասական հայեացքները այս կամ այն կարգը եւ սկզբունքը արձանագրելիս. սակայն դրանից այդ կարգերի նկարագրութիւնը չի աղճատուում շարադրու-

բեան մէջ, այլ նոյն իսկ աւելի եւս որոշ կերպարանք  
 ստանում. այնպէս որ իւրաքանչիւր ընթերցող կասա-  
 րեալ հնարաւորութիւն ունի այդ կարգերի պարզ եւ  
 անուս նկարագրութիւնը կարդալուց եւ ըմբռնելուց  
 յետոյ սեփական բնական կարծիք կազմելու լաւի եւ  
 վատի մասին:

Այս խնդրի մասին արդէն հրատարակուում է (Պետ-  
 րոս Տեր-Յարութիւնեանի բարգմանութեամբ) պրոֆ. Սու-  
 վորովի գրուածքը, որ նոյնպէս հակիրճ եւ մասշտաբի կեր-  
 պով պատմաբանօրէն շարադրում է եկեղեցա-պետական  
 յարաբերութիւնների դարերի ընթացումը կրած փոփո-  
 խութիւնները:

ՍԻՐԱԿԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ:

Յունուար 1902 ամի:  
 Ս. Էջմիածին

Անցեալ տարուայ իմ խօսած ճառի առթիւ,  
 որ տեղի ունեցաւ Համալսարանի տարեկան հան-  
 դիսաւոր ժողովում և որի մէջ ես դէմ էի պար-  
 տազիր քաղաքացիական ամուսնութեան\*), լսեցի  
 ի միջի այլոց այսպիսի մի առարկութիւն, որ  
 քաղաքացիական ամուսնութեան ձևը մի անհրա-  
 ժեշտ պահանջ է այսպէս կոչուած «նոր պե-  
 տութեան», այսինքն այն սկզբունքների, որոնք  
 տիրող դարձան արևմտեան եւրոպական պետու-  
 թեանց ամենանոր օրէնսդրութիւնների մէջ:  
 Այս առարկութիւնը փաստերի կողմից ճշմա-  
 րիտ է. բայց հարցն այն է, թէ այդ որքան  
 ապացուցուած կարելի է համարել: Որպէս զի  
 հիմնովին պարզ լինի մեզ այս հարցը, դրա  
 համար պէտք է ծանօթանանք, թէ ինչ է նոր  
 պետութիւնը, ինչ սկզբունքներ ունի և  
 աստուածային աշխարհակարգի նկատմամբ ինչ  
 արժանիք ունի նրա բնութիւնը: Խնդրում  
 եմ Ձեր բարեմիտ ուշադրութիւնը այս խնդրին  
 այն յուսով, թէ նա աւելորդ չի լինի Ձեր  
 կրթուած հոգու հետաքրքրութեան և Ձեր  
 ուշադիր վերաբերման դէպի արդի արևմտեան  
 եւրոպայի ազգերի եկեղեցական հասարակական

\*) Гражданский бракъ.

կեանքի երեւոյթները, որոնք այս կամ այն կերպ արտայայտուում են նաև մեզանում, Ռուսաստանում:

Նոր պետութեան գլխաւոր բնորոշ գծերն ընդունուում են անձնաւորութեան ազատութիւնը և քաղաքական \*) իրաւունքների ու պարտականութիւնների մէջ քաղաքացիների \*\*) հաւասարութիւնը: Անձնաւորութեան ազատութիւնն արտայայտուում է մարդու հոգեւոր և մարմնաւոր բնութեան ուժերի և ընդունակութիւնների գործադրութեան ինքնորոշման մէջ: Առաջին դէպքում մարդ իրաւունք ունի անվտանգ կերպով վայելել իւր կեանքը, որ նրան Աստուած է շնորհել. ազատ իրաւունք ունի վարուելու իւր հետ առանց իրաւական կախումն ունենալու ուրիշ մարդկանցից (օրինակ ճորտութեան, ստրկական յարաբերութիւնների... ձեռով), իւր համար մշտական բնակութեան տեղ հաստատելու, հայրենիքի սահմաններում տեղափոխուելու և այդ սահմաններից դուրս գալու, ազատ աշխատանքի և արհեստի, սեփականութեան տէր լինելու—ինչպէս հետևանք իւր աշխատանքի, տնական հանգստի և բնակարանի անմատչելիութեան, ընտանիք ունենալու և նրա մէջ կարգ ու կանոն սահմանելու:

\*) Политический.  
\*\*) Гражданинъ.

Երկրորդ դէպքում մարդ իրաւունք ունի իւր միտքը խօսքով, կամ գրականութեան և արուեստի մէջ ազատ կերպով յայտնելու, հասարակական կապեր հաստատելու և հասարակական կեանքի բարիքները վայելելու, ուրիշների հետ ազատ յարաբերութիւն ունենալու (օրինակ պոստի, հեռագրի... միջոցով): Քաղաքական իրաւունքների մէջ հաւասարութիւնը գլխաւորապէս պէտք է արտայայտուի հետևեալով.— առանց հասարակական գիրքի խտրութեան իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք պէտք է ունենայ պետութեան օրէնքի կողմից իւր քաղաքացիական \*) իրաւունքների պաշտպանութիւն սպասելու. քաղաքացիական և քրէական \*) գործերի փամանակ օրէնքի առաջ հաւասարութիւն բոլորի համար, բոլոր քաղաքացիների մէջ պետական պարտականութիւնների հաւասար բաշխումն, պետութեան գործերի կառավարման նկատմամբ դասակարգային արտօնութիւնների բացակայում, բոլոր քաղաքացիների մասնակցութիւնը հասարակական քաղաքական գործերին և այլն: Ի հարկէ մարդկութիւնն այս իրաւունքներն աւելի կամ պակաս չափով վայելում էր և առաջ: Հասկանալի է նոյնպէս, որ նոր պետութեան մէջ էլ լիջեալ իրաւունքները չեն գործադրուում ան-

\*) Гражданский.  
\*\*) Уголовный.

պայման կերպով, այլ մի քանի սահմանափակումներով, որ պահանջում է ընդհանուրի բարեքը և պետական կարգը: Այնուամենայնիւ անձնաւորութեան ազատութիւնը և քաղաքական իրաւունքների մէջ հաւասարութիւնն իրագործուած են նոր պետութեան մէջ անցեալի նկատմամբ այնքան լայն և լրիւ, որ սոքա համարում են նորա բնորոշ յատկութիւնները:

Կրօնների նկատմամբ նոր պետութիւնը վարում է ազատութեան և հաւասարութեան հէնց նոյն սկզբունքներով: Այստեղ ևս, ինչպէս այլ դէպքերում յարաբերութիւնների հիմքը կազմում է խղճի անձնական ազատութիւնը: Ըստ նոր պետութեան վարդապետութեան՝ իւրաքանչիւր մարդ ստանում է բնութիւնից ազատութիւն իւր կարծիքն ունենալ Աստուծոյ և իւր դէպի՝ Նա ունենալիք յարաբերութիւնների մասին: Կրօնական համոզմունքի ազատութիւնը մի բնական և անբառնալի իրաւունք է մարդու համար: Քանի որ այդ համոզմունքը մարդու մէջ է, նա պատկանում է հոգևոր յարաբերութեանց և Աստուծոյ արքայութեան շրջանին և պետութեան ազդեցութեան չի ենթարկուի: Կրօնական համոզմունքը այն ժամանակ է իրաւունքի շրջանը մուտ գործում, երբ նա արտաքին գործողութիւն է գաւնում, երբ լինում է հաւատի գաւանդում:

Այս դէպքում իրաւունքին ուրիշ բան չի մնում, քան կրկին ապահովել իւրաքանչիւրի համար կրօնական համոզմունքների դաւանման ազատութիւնը: Պետութիւնը ինքը չի մտնում գործի էութեան մէջ, կարևոր չի համարում հետաքրքրուել կրօնական գործերով: Հաւատով է արգեօք մէկը Աստուծուն, թէ ոչ — պետութեան համար միևնոյն է: Արգեօք նրա հպատակները քրիստոնեաներ են թէ հրէաներ — հաշիւը մէկ է: Կրօնն ու դրա դաւանելը պետութեան չվերաբերող մասնաւոր գործ է: Իրա համար պետութիւնը ոչ ոքի չի ստիպում այս կամ այն և առհասարակ որևէ հաւատ դաւանելու և ոչ ոքի չի թող տալիս որևէ ճնշում կամ բռնութիւն գործել հաւատի գործի վերաբերմամբ: Պետութիւնը կատարեալ ազատութիւն է տալիս մի դաւանութիւնից միւսն անցնելու և արգելում է եկեղեցական իշխանութիւններին որևէ արտաքին արգելք դնելու դրան: Նա հսկում է եկեղեցական իշխանութիւնների գործունէութեան վրայ հոգևոր յանցանքների համար կարգապահական\*) պատիժ որոշելու սահմանում, ուշք դարձնելով, որ այդ պատիժները ճիշտ եկեղեցական բնաւորութիւն ունենան, որ նոքա չզիպնեն ամենևին պատժապարտների Ֆիզիքական անձնաւորութեան,

\*) Дисциплинарный.



գոյքին, քաղաքացիական պատուին և ազատութեանը:

Պետութիւնը հրաժարուում է որևէ կերպ աջակցելու եկեղեցական պատիժները 'իկատարածելու, ազատ թողնելով իւրաքանչիւրին հնազանդուել կամ չհնազանդուել այդ պատիժներին: Կրօնական համոզմունքների բնաւորութիւնը չպէտք է ունենայ ոչ մի ազդեցութիւն քաղաքացիական իրաւունակութեան \*) կամ այլ ու այն անձի քաղաքական իրաւունքների վրայ: Կրօնական համոզմունքների և դաւանութիւնների ազատութիւնը կարող է սահմանափակման ենթարկուել միմիայն համակեցութեան կանոնների տեսակետից: Ամենից առաջ մէկի կրօնական համոզմունքի և դաւանութեան անձնական ազատութիւնը չպէտք է ճնշէ միւսի նոյնպիսի ազատութիւնը: Կրա համար չի թույլատրոււմ, օրինակ, հրէային հրապարակօրէն քրիստոնեաների ներկայութեամբ հայհոյել Քրիստոսի անունը: Այս դաւանութեան ազատութիւնը չպէտք է հասարակական վայելչութեան սահմաններից անցնի և պետութիւնից ճանաչուած կրօնական համայնքների խաղաղութիւնը խանգարէ: Ուստի թույլատրելի չէ, օրինակ, որ անաստուածը հրապարակ դուրս գայ և բաց ու արձակ ժողովրդի առաջ սկսէ անաստուածութիւն քարոզել: Թույլա-

\*) Правоспособность.

տրելի չէ, որ հրապարակաբար յարսուէ և ծաղրէ բարոյական աշխարհակարգի հիմունքները, մտքերը պղտորէ և ամբոխի կոպիտ կրքերն արծարծէ: Աերջապէս դաւանութեան ազատութիւնը պետութեան անվտանգութեան վնաս չպէտք է բերէ: Պետութիւնը չի կարող թույլ տալ, որ ազատութեան ծածկոյթի տակ անհնազանդութիւն քարոզէին պետական օրէնքներին և օրինաւոր իշխանաւորների կարգադրութիւններին... Տանելի չեն նաև այնպիսի դաւանութիւններ, որոնք համակեցութեան ընդունուած սկզբունքներին հակառակ են, օրինակ, մորմոնների դաւանութիւնը, որ բազմակնութիւն է ընդունում: Պետութեան կողմից ձեռք առած այն բոլոր միջոցները, որոնք նպատակ ունին կարճել դաւանութեան ազատութեան ի չարը գործ դնելը և պահպանել խղճի անձնական ազատութիւնը, ընդհանուր կրօնական խաղաղութեան անվտանգութիւնը և իրան պետութեան ապահովութիւնը՝ դաւանութեան անձնական ազատութեան ճնշումներ չեն համարոււմ:

Իւրաքանչիւր քաղաքացի կարող է իւր կրօնական համոզմունքները տարածել իրան մօտիկ մարդկանց շրջանում մանաւանդ իւր ընտանիքի մէջ և ըստ իւր դաւանանքի կատարել աստուածալաշտութիւնը: Տնային աստուածալաշտութեան համար հարկաւոր չէ ամենեւին պե-

տական թույլատուութիւն: Տնային աստուածաբանականութիւնը ինչպէս և տնային հանգիստը վախելում են իշխանութեան պաշտպանութիւնը կողմնակի անձանց ամեն տեսակ վերաւորանքների և խանդարումների դէմ: Կրօնական համոզումները կարող են տարածուել և տան միջավայրից դուրս հետեւողների աւելի կամ պակաս ընդարձակ շրջանում: Մի կրօնական դաւանութեան հետեւողները կարող են կազմել իրանց մէջ մի առանձին կրօնական ընկերակցութիւն \*): Կրօնական ընկերակցութեանց հիմնարկութիւնը կատարում է անարգել կերպով միայն այն ընդհանուր իրաւունքի հիմամբ, որով քաղաքացիք կարող են հիմնել հասարակական խմբակցութիւններ \*\*) առանց կառավարութեան թույլատուութեան—բայց միայն նրա գիտութեամբ: Կրօնական ընկերակցութիւնների ծագման վերաբերմամբ եղած սահմանափակումները, որոնք կախումն ունին դաւանութեանց յատկութիւնից, կարող են լինել նոյն տեսակի ինչպիսիների որ ենթարկուած է մասնաւոր մարդու դաւանանքի ազատութիւնը: Կրօնական խմբակցութեան \*\*\*) անդամները կարող են կազմել իրանց համար բարոյական կանոնների

\*) Религиозное общество.

\*\*) Общественные союзы.

\*\*\*) Религиозный союз.

և հաւատալիքների որոշ կողէքս, աստուածաբանականութեան կարգ սահմանել, ներքին կարգապահութիւն \*) մտցնել, կրօնական հովիւներ և առաջնորդներ նշանակել և նոցա օժտել որոշ իշխանութիւններով և այլն: Կրօնական ընկերակցութիւնների բոլոր կանոնադրութիւնները, որ կարգաւորում են նոցա ներքին կեանքը, պետութեան աչքում նոյն նշանակութիւնն ունին, ինչ որ մասնաւոր—իրաւական \*\*) բնաւորութիւնն ունեցող միւս բոլոր հասարակական խմբակցութիւնների կանոնադրութիւնները: Նոքա պարտադիր են միայն կրօնական համայնքի \*\*\*) անդամների համար և գործում են միայն նոցա շրջանում և անդամների կամաւոր հպատակութեան պայմանով: Նոր պետութիւնը չի միջամտում կրօնական ընկերակցութիւնների ներքին կեանքին և չի տալիս իւր սանկցիան նորա դրած կանոններին: Նոր պետութեան մէջ չկայ պետական կրօն: Նրա բնութիւնը մերժում է որևէ կապ կրօնի հետ: Նա նայում է կրօնական ընկերակցութեան՝ որպէս մասնաւոր կրօնական խմբակցութեան վրայ, որի հետ ինքն անմիջապէս գործ չունի: Նոր պետութիւնը նոցա մէջ դաւանութեան բնա-

\*) Дисциплина.

\*\*) Частно-правовой.

\*\*\*) Религиозное общество.

ւորութեան տեսակետից ոչ մի խտրութիւն չի դնում. նա բոլորին էլ միևնոյն կերպով է վերաբերում — անտարբեր կերպով: Նոր պետութեան մէջ չպիտի լինի ոչ միայն տիրապետող, այլ նոյն իսկ արտօնեալ կրօն:

Նոր պետութիւնը տալով կատարեալ ինքնօրինութիւն \*) ինչպէս նոր ծագող, նոյնպէս և պատմական կրօնական ընկերակցութիւններին նոցա ներքին գործերի մէջ, իրան է վերապահում նոցա նկատմամբ գերիշխանութեան \*\*) իրաւունք, այսինքն նոցա իրաւական վիճակն անկախ կերպով որոշելու իշխանութիւն: Պերիշխողն ինքը լինելով, պետութիւնն իրաւունք է համարում նորահաստատ կրօնական ընկերակցութեանը իւր սանկցիան տալ, կամ թէ արգելել նրա գոյութիւնը, եթէ նրա սկզբունքները հակառակ կը գտնի հասարակաց բարիքին կամ անվտանգութեան. կարող է կրօնական ընկերակցութեան գործունէութեան ազատութիւնը մինչև որոշ աստիճան սահմանափակել ընդհանուրի բարիքը ապահովելու նպատակով, օրինակ, կարող է սահմանափակել քրիստոնէական եկեղեցիներին պատկանող վանական միաբանութիւններ հաստատելու իրաւունքը, կարող է բոլորովին արգելել վա-

\*) Автономія.

\*\*) Суверенитетъ, верховенство.

նական կարգերից \*) մի քանիսի հաստատումը: Պետութիւնը իրաւունք է համարում հսկելու կրօնական ընկերակցութիւնների պաշտօնեաների գործունէութեան վրայ, որպէս զի նոքա իրանց անմիջական նպատակից չչեղուն և պետութեան շահերին վնասակար ուղղութիւն չբռնեն: Պետութիւնը պետք է նայէ որ եկեղեցական իշխանութիւնից դուրս կարգապահական պատժողական միջոցները եկեղեցական լարակցութիւնների \*\*) շրջանից դուրս չգան և չկցորդուին մասնաւոր մարդկանց ֆիզիկական բռնադատութեան և խղճի ազատութեան ճնշման հետ: Նա իրան պարտաւոր է համարում եկեղեցու պաշտօնեաների անկանոն գործերի վրայ գանգատներ ընդունել մասնաւոր մարդկանցից և նոցա պարտ ու պատշաճ ապահովութիւն ցոյց տալ խղճի ազատութեան ճնշումների ժամանակ: Բացի դրանից, որովհետև օրէնքի առաջ բոլոր կրօնական ընկերակցութիւնները հաւասար են, նոր պետութիւնը իրան պարտաւոր է համարում նոցանից իւրաքանչիւրի համար իւր ունեցած իրաւունքներից խաղաղ օգտուելը ապահովել և պաշտպանել վիրաւորանքներից: Կրօնական խաղաղութիւն պահպանելու համար նա իրաւունք է համարում,

\*) Монашескій орденъ.

\*\*) Церковное отношеніе.

եթէ հարկ կայ, աստուածապաշտութեան հրապարակօրէն կատարումը մի քիչ սահմանափակել, օրինակ, նա կարող է արգելել փողոցներում և հրապարակներում կրօնական յուզարկաւորութիւններ (процессія) կատարելը, զանգահարելը և այլն: Պետութեան գերիշխանութիւնը և կրօնական ընկերակցութիւնների իրանց ներքին գործերում ունեցած ինքնօրինութիւնը ու քաղաքական իրաւունքների կատարելալ հաւասարութիւնը — խղճի և դաւանութեան անձնական ազատութիւնից յետոյ նոր պետութեան դէպի կրօնն ունեցած յարաբերութեանց երկրորդ սկզբունքն է:

Նոր պետութեան դէպի բոլոր կրօններն ունեցած հաւասար անտարբերութիւնից բնականօրէն հետևում է պետութեան կատարելաբաժանումը եկեղեցուց: Եւ այս քայլն արդէն արել է նոր պետութիւնը, որ և համարում է մարդկային քաղաքակրթութեան ասպարէզում մի մեծ յառաջադիմութիւն: Շատերի համար ըզձալի պետութեան այս վիճակը բնորոշւում է նրանով, որ քաղաքացիական և քաղաքական յարակցութիւնները \*) բոլորովին գտւում են կրօնի ազդեցութիւնից: Այսպէս, ծննդեան, մահուան և պակագրութեան դէպքերի ցուցակագրութիւնը (регистрація) փոխանակ եկե-

\*) Гражданскія и политическія отноше́нія.

ղեցական պաշտօնեաներն, յանձնուած է պետական աստիճանաւորներին. դրա հետ միասին կորցնում են իրանց պարտադիր նշանակութիւնը այն կրօնական ծիսակատարութիւնները, որ առաջ կատարւում էին լիշեալ դէպքերում: Մասնաւոր իրաւակցութիւններից \*) ամենակարևորը—ամուսնութիւնը կանոնաւորում է բացառապէս պետութիւնից, որ ամուսնութեան համար դնում է իւր քաղաքացիական ձևը — ինքն է որոշում ամուսնադրութեան և ամուսնալուծութեան օրինաւորութեան պայմանները, ուշադրութեան չառնելով ամուսնութեան համար եղած կրօնական արգելքները, օրինակ հոգևոր ազգակցութիւն, տարակրօնութիւն (разновѣріе) և ապահարգանի մասին զանազան եկեղեցական կանոններ: Եկեղեցական կեանքի կարգը խանգարողների վրայ եկեղեցական իշխանութեան դրած կարգապահական պատիժները չպետք է վնաս հասցնեն պատժապարտների կեանքին, գոյքին և քաղաքացիական պատուին: Քաղաքացու այս կամ այն դաւանութեան պատկանելը չպետք է պետական ծառայութեան ստանձնելու իրաւունքի վրայ ազդէ: Ոչ ոք չի կարող կրօնական շարժառիթների պատճառով պետական օրէնքը կատարելուց ազատ լինել, ինչպէս և աստիճանաւորը չի կարող եկեղեցուց

1003  
11484

\*) Частно-правовыя отноше́нія.



կարգապահական պատժի ենթարկուել նրա համար, որ եկեղեցու շահերին վնասակար համարուած օրէնքները ճիշտ կերպով կատարուած է: Պետութիւնը նշանակուած է քաղաքացիական հանգստեան օրեր, և այս դէպքում, իհարկէ, նա կարող է ի նկատի առնել եկեղեցական օրացոյցը, բայց նրան այնքան համաձայն է մնում, որքան այդ պահանջում է հասարակաց բարիքը և բոլորի ընդհանուր իրաւունքը: Պետութիւնը կարեւոր չի համարում խնդրել կրօնական բնկերակցութիւններին, որ նոքա պետական կեանքի զանազան ձեռնարկութիւնների և այլ հանդիսաւոր դէպքերի առթիւ աղօթեն: Պետութեան գլուխը պաշտօնն ստանձնելիս հարկաւոր չի համարում խնդրել Աստուծոյ օրհնութիւնն ու շնորհաբեր օգնութիւնը առաջիկայ իւր դժուար գործի համար, պետութիւնը պատրաստ է իւր բոլոր աստիճանաւորներին ազատել ծառայութեան մէջ հաւատարիմ մնալու երզումից, ինչպէս մի սակաւ օգուտ—(փոքր) բանից. նա պատրաստ է նոյնպէս վերացնել դատաստանական երզումը. իսկ երբ գործ է գնում թէ այս և թէ այն միջոցը, այդ էլ լինում է առանց Աստուծոյ անունը լիշելու: Պետական ուսումնարաններում չպէտք է աւանդուին կրօնական աւարկաներ: Հոգևորականներն ամենևին մասնակցութիւն չպէտք է ունենան հասարակական գործերում,

որպէս ոչ այս աշխարհի մարդիկ: Նոքա չպէտք է վայելեն ոչ մի արտօնութիւն \*) և առանձնաշնորհումն \*\*) պետական թէ անձնական և թէ գոյքի պարտականութիւնները կատարելու նկատմամբ: Նոյնպէս և եկեղեցական հաստատութիւնները և հիմնարկութիւնները — եկեղեցիները, վանքերը պետական և հասարակական պարտականութիւնները պէտք է կատարեն: Հասարակական բարեգործութիւնը պէտք է քաղաքացիական իշխանութեան տնօրէնութեան տակ լինի և ոչ եկեղեցական: Քրիստոնեայ պետութեան օրէնքները Աւետարանի և ընդհանրապէս եկեղեցական վարդապետութեան հետ չեն կարող ոչ մի կապ ունենալ: Եւ ահա նոր պետութեան դէպի կրօնն ունեցած յարաբերութեան երրորդ սկզբունքը, որ շատերի կարծիքով կազմում է նրա փառքն ու պարծանքը—քաղաքացիական համախմբութեան կատարեալ անշատումն կրօնի հետ ունեցած կապերից:

Նոր պետութիւնը, ինչպէս անունից արդէն երևում է, շատ ժամանակուայ բան չէ: Բաւանութեան ազատութիւնը և քաղաքացիական յարակցութիւնները կրօնի ազդեցութիւնից ազատելը կեանքում իրագործելու առաջին փորձն արին հիւսիսային միացեալ նահանգները անցեալ

\*) Преимущество.

\*) Льгота.

դարի վերջում: Բնական էր սպասել, որ ֆրանսիացիք ևս, որոնք XVIII դարում աշխատում էին բարեփոխել իրանց պետական կազմը հաւասարութեան և ազատութեան սկզբունքների հիման վրայ, ամերիկացոց օրինակին հետեւելով կրճատեցնեն դաւանութեան կատարեալ ազատութիւն: Բայց նոցա ազատութիւնը միայն խօսքով էր, իսկ գործով նոքա քանդում էին ամենայն իրաւունք: Իրօք լաւակնութիւն յայտնեցին ըստ իրանց քմահաճոյքի վարուել և տնօրինել եկեղեցական կեանքի ներքին գործերը և երբ բնականօրէն իրանց անօրէն ոտնձգութիւնների դէմ դուրս ելաւ օրինական եկեղեցու իշխանութեան ընդդիմադրութիւնը, նոքա խիստ հալածանք հանեցին եկեղեցու և հաւատի դէմ. քշեցին, ցրուեցին հոգևորականութիւնը, քանդում և փակում էին եկեղեցիները, վերացնում էին վանքերը, յօգուտ պետութեան գանձարանի գրաւում էին եկեղեցու գոյքերը: Սակայն եկեղեցու դէմ հանած հալածանքը շուտով պիտի վերջանար, որովհետև ժողովուրդը կապուած էր հաւատին: Իսկ երբ քաղաքացիական կարգը վերականգնեցաւ, կոնսուլը՝ ապա Ֆրանսիայի կայսր Նապօլէօն I-ը կաթողիկէ եկեղեցու գլխի հետ յարաբերութեան մէջ մտաւ այն նպատակով, որ երկկողմանի համաձայնութեամբ կարգաւորեն եկեղեցական գործերը:

1801 թ. յուլիսի 15-ին պապի հետ կոնկուրատ հաստատուեցաւ և լետոյ ի լրումն դրա, ինքը — Ֆրանսիայի կառավարութիւնը հրատարակեց այսպէս կոչուած «Օրգանիկ յօդուածներ», կոնկուրատի սկզբունքներն աւելի մանրամասն զարգացնելու և գործնականում (на практикѣ) գործածելի դարձնելու նպատակով: Կոնկուրատի մէջ հաստատութիւն գտան կրօնական կեանքին վերաբերող մի քանի երևոյթներ, որ կապուած էին լեղափոխութեան հետ, այսպէս օրինակ, եկեղեցական գոյքերի օտարացումը \*), բացի կաթողիկոսութիւնից նաև ուրիշ պաշտամունքներ թոյլ տալը: «Օրգանիկ յօդուածները» մէջ բոլոր դաւանութեանց շնորհուով է հաւասար հասարակական դիրք, բողոքականներին թոյլ է տրուում հրապարակական աստուածաշտութիւն կատարել, կրօնական խաղաղութեան համար կաթողիկներին արգելում է կրօնական յուղարկարութիւններ (процессія) անել եկեղեցուց դուրս այն տեղերում, որտեղ բացի կաթողիկներից կան և բողոքականներ: Ներմուծուած է քաղաքացիական ամուսնութիւն, թոյլատրելով հանդերձ դրանից լետոյ կատարել նաև եկեղեցական ծիսակատարութիւնը: Մետրիկների տեսչութիւնը յանձնուած է պետական աստիճանաւորներին: Եկեղեցու տեսչութեանը պատկանող գործերից

\*) Отчуждение.

հեռացուած են այն բոլորը, որ որևէ կայ ունի քաղաքացիական յարակցութեանց հետ: Այս բոլոր կարգադրութիւնները համաձայն են նոր պետութիւն սկզբունքներին: Բայց դրա փոխարէն Նապօլէօն I-ը կրօնական համայնքներին \*) նոցա ներքին գործերի մէջ ինքնօրինութիւն չտուաւ, ինչպէս այդ պահանջում էր նոր պետութեան սկզբունքների հետևողական ներմուծումը: Կաթոլիկ եկեղեցու նկատմամբ պահանջում էր, որ կառավարութեան կողմից համաձայնութիւն տրուի պապի իւրաքանչիւր կարգադրութեան համար. նրա ներկայացուցիչների իւրաքանչիւր գործողութեան համար, արտասահմանեան ժողովների իւրաքանչիւր որոշման համար. պետութեան սահմանում էլ եպիսկոպոսները միայն կառավարութեան թույլատուութեամբ կարող են ժողով անել: Պետութիւնը իրան էր յատկացնում եկեղեցական իշխանութիւնից գործած պաշտօնագանցութեան վրայ գանգատներ ընդունել: Ամեն մի հոգևորական, որ եկեղեցական զպրոցներում ուսուցչի պաշտօն է ստանձնում, պարտաւոր էր իւր հաւատքի և համոզմունքների համերաշխութիւնն յայտնել 1682 թ. Գալլիկան Ռեկլարացիայի հետ, ուր ի միջի ալլոց ասուում էր, որ աշխարհական կառավարիչները ըստ աստուա-

\*) Религиозная община.

ծային կարգի աշխարհիկ գործերում ենթարկուած չեն ամենևին որևէ եկեղեցական իշխանութեան: Կաթոլիկ եկեղեցու ամբողջ վարչական կազմակերպութիւնը, եպիսկոպոսութիւնների և ծխերի բաշխումը, հոգևոր սեմինարիաների հիմնարկութիւնը, այն ամենը, որ վերաբերում էր հոգևորականութեան պարտականութիւններին, եկեղեցու պաշտօնեաներ կարգելու պայմաններին, հոգևորականութեան ապրուստին, վարքին, եկեղեցական տօներին և այլն... այս բոլորը պետական հսկողութեան և կարգաւորման էր ենթարկուած եղել: Չնայած պապի բողոքին (1802 թ. 23 մայիսի իւր կարգի նայներին ուղղուած ճառի մէջ) Օրգանիկ յօդուածները գործնականի մէջ ոչ ժ ստացան առանց որևէ հակառակութեան հոգևորականների կողմից: Յեղափոխութեան սարսափներից լետու Ֆրանսիայի հոգևորականութիւնը յօժարակամ լսում էր կրօնը վերականգնողի հրամանները: Ինքն ըստինքեան հասկանալի է, որ բողոքականներին իրանց ներքին գործերում աւելի ևս քիչ ազատութիւն էր տրուած, քան կաթոլիկներին: Համայնքի կազմակերպութեան իւրաքանչիւր փոփոխութեան, կարգապահութեան կամ վարդապետութեան վերաբերեալ իւրաքանչիւր վճիռ պէտք է հաստատուէր Պետական Խորհրդարանում: Պաշտօններ կարգելը կախ-

ուած էր կառավարութիւնից, որին ի հայեցողութիւն բողոքական վարչութիւնը թեկնածուներ էր ներկայացնում: Բողոքականների սինոդները կարող էին գումարուել միայն կառավարութեան թույլատուութեամբ և նոցա մէջ քննուելիք խնդիրները պետութիւնից հաստատուելուց յետոյ: Խորհրդակցութիւնները լինում էին Պրեֆեկտի ներկայութեամբ, իսկ վճիռները հաստատում էր կառավարութիւնը: Կառավարութեան ազատութիւն ստացան և հրէայք — բայց ինչպիսի ազատութիւն: Նոքա պարտաւոր էին այդ ազատութեան փոխարէն խոստում տալ իրանց նոր հայրենիքի քաղաքացիական բարոյականը (МОРАЛЬ) ընդունել և ճանաչել ու հրաժարուել Հին-Կտակարանի և Տալմուդի այն կանոններից, որոնք համաձայն չէին այդ բարոյականին. նոքա պէտք է իրանց եղբայր անուանէին ֆրանսիացիներին և ոչ օտարներ, ինչպէս իրանց օրէնքն էր սովորեցնում, Փրանսիան պէտք է իրանց հայրենիքը համարէին, պաշտպանէին և ծառայէին նրան: Բացի կաթոլիկութիւնից, բողոքականութիւնից և հրէականութիւնից ուրիշ դաւանութիւն թույլ չէր տրուում: Կաթոլիկութիւնը բոլոր դաւանութիւններից բարձր էր. նա պետական կրօն էր, թէև պաշտօնապէս այդ ժամանակ (XVIII դարու սկզբում) կոչուում էր ազգի մեծամասնութեան կրօն:

Թագաւորութեան ռեստաւրացիայի շրջանում, երբ բոլոր պետութիւնների մէջ ևս եկեղեցու և հոգևորականութեան ազդեցութիւնը զօրացաւ քաղաքական գործերի ընթացքի վրայ, իհարկէ չէր կարելի սպասել եկեղեցուց պետութիւնը անջատելու սկզբունքի նորանոր զարգացման: Այդ ժամանակ շարունակուում էր դեռ եկեղեցու և պետութեան միջև յարաբերութեանց առաջուայ սխտեմը, որով եկեղեցին պետական հիմնարկութեան դիրք ունէր, թէև մեծ չափով դաւանութեան ազատութիւն ունէին նաև դիսսիդենտները: Նոր սխտեմը մի քաջ արաւ դէպի առաջ 1830 թ. յուլիսի լեղափոխութիւնից յետոյ, իսկ առանձին յաջողութեամբ առաջ զնաց և տարածուեց 1848 թ. փետրբուարի լեղափոխութիւնից յետոյ: Բեւրբու 1831 թ. փետրուարի 25 սահմանադրութեան մէջ (յօդ. 14—17) ամենայն պարզութեամբ արտայայտուած են նոյն սկզբունքները՝ խղճի ազատութիւն, հասարակական աստուածապաշտութեան ազատութիւն, ամուսնութեան և զպրոցական դաստիարակութեան անկախութիւն կրօնից և ազատութիւն—որ մենք տեսանք արդէն Հ. Ա. Նահանգներում: Ապա 1848 թ. լեղափոխութիւնից յետոյ Փրանկֆուրտի պարլամենտի նիստում ընդունուեցան պետութեան զէպի դաւանութիւններն ունեցած յարաբերութիւնների



հետեւեալ սկզբունքները: Իւրաքանչիւր գերմանացի վայելում է հաւատի և խղճի կատարեալ ազատութիւն: Ոչ ոք պարտական չէ իւր կրօնական համոզումների մասին հաշիւ տալ: Իւրաքանչիւր գերմանացի վայելում է անսահման ազատութիւն ուրիշների հետ միասին մասնակցելու թէ տնային և թէ հրապարակային աստուածաշարժութեան ըստ իւր հաւատոյ ծէսերի: Գաւանութիւնը չի կարող ոչ սահմանափակել, ոչ էլ պայմանաւորել քաղաքացիական և քաղաքական իրաւունքների վայելումը: Նա չպէտք է ոչ մի վնաս բերէ նաև այն պարտականութեանց կատարման, որոնք վերաբերում են պետութեանը: Իւրաքանչիւր կրօնական համայնք իւր ներքին գործերը կազմակերպում է անկախ, բայց պետութեան ընդհանուր օրէնքներին ենթարկուելով: Ոչ մի կրօնական ընկերակցութիւն միւսի նկատմամբ չի կարող պետութիւնից նախապատուութիւն ստանալ: Պետական եկեղեցի բնաւ չի կարող լինել: Կրօնական նոր ընկերակցութիւններ կարող են ազատ առաջ գալ առանց պետութեան հաստատման:

Ամուսնութեան օրինաւորութիւնը քաղաքացիական մտքով բացառապէս կախուած էր քաղաքացիական ակտի կատարումից: Եկեղեցական պսակադրութիւնը կարող է կատարուել

միայն քաղաքացիական ակտը կատարելուց լետոյ: Կրօնների տարբերութիւնը ամուսնութեան արգելք չպէտք է հանդիսանայ: Գիրքի ակտերը (акты о состоянии) վարում են պետութեան աստիճանաւորները: Այս բոլոր գրութիւնները լետոյ ամբողջապէս ներմուծուեցան գերմանական կայսրութեան 1849 թ. 28 մարտի սահմանադրութեան մէջ: Բայց սոքա իսկոյն չմտան գերմանական ջոկ ջոկ պետութիւնների օրինագրքերի մէջ: Միայն այս կարգադրութիւններից ամենակարևորները՝ գաւանութեան ազատութեան և կրօնական ընկերակցութիւններ կազմելու և աստուածաշարժութիւնը հրապարակօրէն կատարելու ազատութեան մասին՝ ընդունուեցան իբրև գործող իրաւունք մի քանի պետութիւնների մէջ իսկոյն (Պրուսիա, Հեսսէն, Օլդենբուրգ), իսկ միւսների մէջ 10 տարուց լետոյ (Բագէնում 1860 թ. 9 դեկտեմ. իսկ Վիւրտենբերգում 1862 թ.), իսկ մի քանիսների մէջ գրանից էլ ուշ (Սակսոնիա): Վերջին ժամանակի անցքերը, յատկապէս 1854 թ. դեկտեմ. 9-ի չապպի էնցիկլիկը նրան կցած «Մեր դարի մոլորութիւնների ցուցակով» (Syllabus errorum aetatis nostrae), որի մէջ մեղադրուում էին նոր պետութեան բոլոր սկզբունքները, իսկ լետոյ 1870 թ. Վատիկանի ժողովում յայտնուած պապի անսխալականութիւնը կրօնական գործերի և

քրիստոնէական կեանքի վերաբերմամբ—այս բոլորը գրգեցին գերման կառավարութիւններին Պրուսիոյ նախագահութեամբ օրէնսդրական ճանապարհով հռչակել քաղաքացիական յարաբերութիւնները անկախ կրօնի որևէ ազդեցութիւնից:

Այս հարցի նկատմամբ Գերմանեային հետեց նաև Աւստրիան: Աւստրիական սահմանադրութեան և կայսերական 1849 թ. պատենտի մէջ իւրաքանչիւր կրօնական ընկերակցութեան շնորհուով է կրօնի տնային կատարման իրաւունք, իսկ օրէնքով ճանաչուած իւրաքանչիւր կրօնական ընկերակցութեան իրաւունք է տրուում կրօնը հրապարակօրէն կատարելու: Այն կրօնական ընկերակցութիւններին, որոնք ընդունուած են օրէնքից, որպէս հանրային ընկերակցութիւններ \*), իրաւունք է տրուած անկախ կերպով կառավարելու և կանոնաւորելու իրենց գործերը և ժողովրդական ուսումնարաններում կրօն ւաւանդելու իրաւունքը: Մի և նոյն ժամանակ նրանք ապահով կերպով կարող են տիրել և օգտուիլ այն բոլոր հիմնարկութիւններից, նպաստներից և ֆօնդերից, որոնք յատկացած են նոցա պաշտամունքի, ուսուցչութեան և բարեգործութեան նպատակների համար: Հէնց նոյն օրէնքով որոշուեցաւ, որ քաղաքացիական և

\*) Политическая корпорация.

քաղաքական իրաւունքների վայելումը կախուած չէ դաւանութիւններից: Նոյն այդ սկզբունքներն արտայայտուած են և աւստրիական պետութեան քաղաքացիների 21 դեկտ. 1867 թ. ընդհանուր իրաւունքների օրէնքի մէջ: Ապա աւստրիական օրէնսդրութեան լետագայ զարգացումը այս ուղղութեամբ կազմում են 1868 թ. մայիսի 25-ի 3 օրէնքները. 1) ամուսնութեան օրէնք, որով Աւստրիայում հաստատուում է պէտք եղած դէպքում քակաքացիական ամուսնութիւն և ամուսնական գործերը յանձնուում են աշխարհական դատարանին. 2) պետական և հասարակական ուսումնարանների օրէնք, այն է, որ սոքա դաւանական (конфессиональный) չեն, և իւրաքանչիւր կրօնական խմբակցութիւն իրաւունք ունի պահել իւր դաւանական ուսումնական հիմնարկութիւններն սեփական միջոցներով և 3) դաւանութիւնների փոխադարձ յարաբերութեան օրէնք, որով բոլոր դաւանական խմբակցութիւնները հաւասարուում են օրէնքի առաջ իրանց իրաւունքներով և ամենայն քաղաքացի, լինելով 14 տարեկան, իրաւունք է ստանում դաւանութիւն ընտրել կամ մի դաւանութիւնից միւսին անցնել քաղաքացիական տեսակետից առանց որևէ զրկանք կրելու: Ապա դրան հետևում է 1874 թ. 7 մայիսի կաթոլիկ եկեղեցու արտաքին յարաբերութիւնների մասին

օրէքը — օրինակ եկեղեցական դատաստանի և պատիժների մասին և 1874 թ. 20 մայիսի օրէնքը նոր հիմնարկող կրօնական խմբակցութիւնների պետութեան կողմից ճանաչուելու պայմանների և կանոնների մասին:

Նոր պետութեան սկզբունքները ընդունելու նկատմամբ Իտալիան միւս պետութիւններից լետ չմնաց: Այս տեսակի միջոցներ ձեռք առնուան իսկոյն և եթ, երբ Պիեմոնտը սկսեց միացնել իտալական պետութիւնները: Այդ միջոցներն էին քաղաքացիական ամուսնութեան ներմուծումը (1865 թ. 25 յունիս), կրօնական կարգերի \*) ոչնչացումը և եկեղեցապատկան գոյքերի գրաւումը (1866 թ. 7 յուլիսի), զինւորական պարտականութեանց ենթարկելը կղերին, եկեղեցուն հակառակ ուսումնարանների ենթարկումը և այլն: Երբ Իտալական թագաւորութեան միացուեց և Հռոմը, կարիք յառաջ եկաւ պետութեան դէպի պապն ու եկեղեցին ունեցած յարաբերութիւնները կարգաւորելու և 1871 թ. 13 մայիսի իտալական կառավարութիւնը «ապահովութեան օրէնք» (ЗАКОНЪ О ГАРАНТИЯХЪ) հրատարակեց, որ իտալական կառավարութեան համար եկեղեցական գործերի նկատմամբ հիմնական օրէնսգրութիւն դարձաւ:

\*) Религиозный орденъ.

Չուիցերիայում եկեղեցաքաղաքական յարաբերութիւնները կարգաւորուել են 1874 թ. մայիսի 29 դաշնակցութեան օրգանիկ օրէնքով նոր պետութեան ոգով և նոյն սահմաններում, ինչ որ ցոյց տրուեցաւ Գերմանական սահմանադրութեան մէջ: Նոր պետութեան սկզբունքները չանցան առանց ազդեցութեան և Շվեդ-Նորվեգիոյ համար: Ըստ 1876 թ. Իսպանական սահմանադրութեան կաթոլիկութիւնը պետական կրօն է, միայն այդ կրօնն իրաւունք ունի հասարակական աստուածաշուտութեան: Կարող են տանելի լինել և ուրիշ դաւանութիւններ, միայն թէ դոքա չհակասեն քրիստոնէական բարոյականութեան:

Այսպիսով դաւանութեան ազատութեան և քաղաքացիական յարակցութիւնները կրօնի ազդեցութիւնից զատելու սկզբունքը մի դարի ընթացքում տարածուեցաւ սակաւ բացառութեամբ եւրոպական պետութիւնների մէջ աւելի կամ պակաս չափով: Բաց հարկաւոր է նկատել, որ դեռ ոչ մի պետութեան մէջ լիովին չէ ներմուծուած, համաձայն այն տեսական կազմակերպութեան, որ տալիս է այդ սխտէմը եկեղեցու և պետութեան յարաբերութիւնների համար, ի բաց չառեալ նոյն իսկ Հ. Ա. Նահանգները, որոնք համարուում են խղճի և դաւանանքի ազատութեան կլասիկ երկիր: Հ. Ա. Նա-

Հանգներում այս սիստէմի գլխաւոր սկզբունքներն են ներմուծուած օրէնքների մէջ: Ամերիկական օրէնքների համաձայն կրօնը համարուած է իւրաքանչիւրի անհատական ազատութեան և ոչ պետութեան հայեցողութեան գործ: Բոլոր դաւանութիւնները վայելում են օրէնքի առաջ հաւասար իրաւունքներ և բոլորովին ազատ են իրանց ներքին գործերը տնօրինելու մէջ: Կրօնը չպէտք է ազդէ ոչ քաղաքացիական և ոչ քաղաքական յարակցութիւնների վերայ: Գաղութան զարգացման գործը գտնուած է պետութեան տեսչութեան տակ: Պետական դպրոցները պէտք է լինին ոչ դաւանական: Բայց սոցա հետ միասին Հ. Ամերիկացիների թէ օրէնքների և թէ սովորութիւնների մէջ շատ փաստեր և երևոյթներ կան, որոնք շեղուելով իշտալ սկզբունքներից, հակուած են կրօնին պետական նշանակութիւն տալու: Այսպէս օրինակ Հ. Նահանգները պարտադիր են համարում իրաւունքով կիրակին պահելը և այդ օրուայ սրբութիւնը յարգելով արգելում են նոյն օրը բաց անել հասարակական ընթերցարաններ, վաճառատներն և գինետները, նոյնպէս և զուարճացուցիչ հիմնարկութիւնները, թատրոններն ու ցիւրկերը: Եւ հասարակաց կարծիքը այս դէպքում լիովին համակրում է այս պետական օրէնքը: Այս դէպքում հասարակաց կարծիքի սղղութեան

մասին կարելի է դատել, օրինակ, հետեւեալ փաստից: 1848 թ. նոր նախագահի Սպիտակ Տուն մտնելը, որ կատարուած է սովորաբար մարտի 4-ին, կիրակի օրը պատահեց. և ինչ: Հասարակաց կարծիքը թոյլ չտուաւ կիրակի օրուայ սրբութիւնը խախտել ամերիկացուց այս մեծ ազգային հանգիստով: 1876 թ. Հ. Ամերիկացուց հասարակաց կարծիքը նոյն ոյժով արտայայտուեցաւ Ֆիլադէլֆիայում համաշխարհային ցուցահանդէսի կիրակի օրում բաց անելու դէմ, չնայած այն բանին, որ այդ դէպքում հասարակաց կարծիքը պիտի 'ի նկատի առնէր նաև օտարերկրեայ մի բազմութիւ տարր՝ յանձին ցուցահանդէսի բազմակեզու և բազմակրօն էկսպոնենտների և յաճախողների: Հ. Ա. Նահանգներում եկեղեցիների մօտ արգելում է ոգելից խմիչքների առևտուրը՝ տուգանքի սպառնալիքով: Ժամասացութեան խանգարումն անհամեատ վարքով, անվայել խօսակցութեամբ տաճարի կամ աղօթատան մէջ կամ դուրսը պատժուած է դրամական ծանր տուգանքով (25 — 500 դոլլար) կամ բանտարգելութեամբ: Բոլոր երգումների ժամանակ, որ լինում են դատաստանի մէջ կամ նոյն իսկ պետական պաշտօն ստանձնելիս պարտադիր է համարում Աստուծոյ անունը լիշատակել: Կոնգրէսի և օրէնսդրական ժողովների նիստերը սովորաբար աղօթքով

են բացուած և նոյն նպատակով այդ հաստատութիւններն ունին իրանց յատուկ կառելլաները: Զօրքը, նաւատորմիղը և բանգերն էլ ունին նոյնպիսի հոգեւոր պաշտօնեաներ, որոնք իրանց ռոճիկը ստանում են պետական գանձարանից: Մի քանի ղէպերում Ա. Նահանգները կատարում են ընդհանուր հանգիսաւոր մաղթանքներ և տօնակատարութիւններ: Այսպէս օրինակ. նոքա ամեն տարի նոյեմբեր ամսի վերջին հինգշաբթի օրը ազգային-կրօնական-քաղաքային տօն են կատարում: Այդ տօնի օրը իւրաքանչիւր անգամ նահանգների նախագահն է որոշում մի առանձին հրովարտակով, որով նա հրաւիրում է ժողովրդին նշանակուած օրը հաւաքուել իրանց ժամասացութեան տեղերը, ըստ պատկանելութեան, որպէս զի Աստուծոյ առատաձեռնութեան և ողորմութեան համար շնորհակալութիւն յայտնեն ամենաբարձրեալ Աստուծուն և աղօթեն, որ այդ այնուհետև ևս շարունակուի: Նոյնպէս և իւրաքանչիւր առանձին նահանգում երբեմն նշանակում են հանրաժողովրդական աղօթքի և պահքի օրեր, օրինակ երկրագործական վար ու ցանքի համար Աստուծոյ օրհնութիւն և զթառատութիւն խընդրելու համար: Հ. Ամերիկայի համարեա բոլոր նահանգներում աղօթատների և եկեղեցիների սեփականութիւնը պետական և հասարակական

պարտականութիւններից ազատ են. այսպէս և հոգեւորականութիւնը շատ տեղերում (Վիրգինիայում, Տեխասում, Նիւ-Եօրկում Պենսիլվանիայում և այլն) ազատ է զինւորական ծառայութիւններից և հասարակական բնտրովի պաշտօնէութիւններից: Հ. Ա. Նահանգները կրօնական ընկերակցութիւններին են յանձնել բարեգործութիւնը, օգնելով նոցա իրանց միջոցներով: Ամերիկայի դպրոցներում պարտադիր է կրօնի դասաւանդութիւնը: Ըստ ամերիկացոց հասկացողութեան, կրօնը, ինչպէս բարոյականութեան հիմք, անհրաժեշտօրէն պէտք է կրթութեան գլխաւոր տարրերից մէկը լինի: Ամերիկայի ժողովրդական դպրոցներում, որպէս զի դաւանութեանց առանձնայատկութիւններին չըդիպին՝ աւանդում են քրիստոնէական կրօնի այն գլխաւոր սկզբունքները, որ ընդհանուր են բոլոր դաւանութեանց: Ամերիկացոց ժողովրդական դպրոցներում փոխանակ կրօնի որևէ դաւանաբանական ձեռնարկի Ս. Գիրքն է կարդացուած ամեն օր դասից առաջ մի-մի գլուխ: Ապաստում են ընդհանուր քրիստոնէական աղօթքներ, օրինակ — Հայր մեր, իսկ երգեցողութեան համար նշանակուած ժամերում երգում են սբբաբան օրհներգներ, որ գործ են ածում եկեղեցական ժամասացութեան մէջ: Բացի դրանից իւրաքանչիւր դաւանութիւն հոգ է տանում բա-

նալու կիրականօրեայ դպրոցներ հոգևորականութեան անմիջական հսկողութեան տակ: Այս դպրոցներում յաջողութեամբ լրացումն է ստանում այն բնդհանուր կրօնական զարգացումը, որ սկսում է պետական դպրոցներում: Կաթողիկները պետական ուսումնարաններում կրօնի այսպիսի դաւանութեան համար էլ դժգոհ են, նշմարելով նրա մէջ բողոքականութեան հետքեր: Իւր անդամների կրօնական կրթութեան խիստ կաթողիկ ուղղութիւնը պահպանելու համար կաթողիկ եկեղեցու համայնքներն աւելի լաւ են համարում իրանց հաշուով պահել մասնաւոր դպրոցներ կրօնի դաւանական դասաւանդութեամբ, որին իհարկէ Ամերիկայի օրէնքը արգելք չառաջ չի բերում: Կրօնի դասաւանդութիւնն աւելի մեծ նշանակութիւն ունի միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում, այսպէս անուանուած կոլլէժներում և համալսարաններում, քան ժողովրդական ուսումնարանների մէջ: Ուսուցման ամերիկական սիօտէմի համաձայն միջին և բարձրագոյն ուսումնական հիմնարկութիւնները պետութիւնը յանձնել է հասարակութեան հոգացողութեանը: Նոքա հաստատուած և գոյութիւն են պահպանում կամ լուսաւորութեան նախանձախնդիր մասնաւոր մարդկանց նուէրներով, կամ զանազան տեսակի ընկերութեանց հաշուով: Այս հաստատութիւններում ուսումը կրօնական

բնաւորութիւն ունի: Ամերիկական կոլլէժներն ու համալսարանները մեծ մասամբ դաւանական կնիք են կրում և գտնուած այս կամ այն դաւանութեան պատկանող համայնքի տեսչութեան տակ: Հասկանալի է, որ նոցա կազմակերպութիւնն ևս նոցա բնաւորութեան համապատասխանող ուղղութիւն ունի. նոցա զլուխ են կանգնում սովորաբար այս կամ այն կրօնական համայնքի հոգևորականութեան անդամներից տեսուչներ: Ամերիկայում զգալի սահմանափակութիւններով է մտնում գործնականի մէջ նաև այն սկզբունքը, որ հասարակական յարակցութիւնները առանձնացած է հրատարակում կրօնի սզգեցութիւնից, և յատկապէս պետական ծառայութեան նկատմամբ: Ամերիկայի շատ նահանգներում պետական պաշտօն ձեռք բերելու համար պահանջում է որոշ կրօնական օրպիսութիւն (квалификация): Այսպէս օրինակ շիւսիսային Կարոլինայի սահմանադրութեան մէջ կարգում ենք. «Իւրաքանչիւր անհատ, որ հերքում է Աստուծոյ գոյութիւնը կամ քրիստոնէական կրօնի ճշմարտութիւնները, կամ Հ. և Ն. Կտակարանների աստուածային հեղինակութիւնը, չպէտք է նահանգում ոչ մի պաշտօն վարէ»: Նիւ-Համպշիր նահանգի սահմանադրութեան մէջ դեռ 1876 թ. (թուի թէ այժմ էլ լինի այդ յօդուածը) պահանջում էր. «Պատգամաւոր-

ների Պալատի իւրաքանչիւր անդամ պէտք է բողոքական լինի. ոչ ոք, որ բողոքական չէ, սենատոր ընտրուելու իրաւունսկութիւն չէ կարող ունենալ: Աչ-բողոքականը չի կարող և կառավարչի պաշտօն ստանձնել»: Պենսիլվանիա և Տիննեսսի նահանգների սահմանադրութեանց համաձայն պետական պաշտօն վարելու համար պահանջուում է որ հաւատան զոնէ Աստուծոն և հանդերձեալ կեանքին: Ըստ սահմանադրութեան Մառելանդ նահանգի պետական պաշտօնեայ ընտրուելու համար նախապէս պահանջուում է որ քրիստոնէական հաւատը ընդունելու խոստովանութիւն տան, իսկ հրէաների համար պահանջուում է, որ յայտնեն հանդերձեալ վարձատրութեան և պատժի վրայ ունեցած իրանց հաւատի մասին: Նոյն իսկ խղճի ազատութիւնը, որ շնորհուում է մասնաւոր անձանց, Ամերիկայում չէ կարելի այս նկատմամբ կատարեալ սանձարձակութեան հասցնել, — հասկանալ այն մտքով, իբր թէ ամեն մարդ ազատ է իւր ուղած հաւատն հնարելու կամ անաստուած մնալու: Այս միտքն ուղղակի յայտնուած է Նիւ-Եօրկի սահմանադրութեան մէջ: Յօդուտ սորա խօսուած են կրօնական ցենզի մասին եղած վերևում բերած միւս Նահանգների օրէնսդրութիւնները պետական պաշտօն վարելու համար: Նոցանից երևում է, որ ըստ ամերիկացւոց հալացքների,

միայն նա կարող է հասարակութեան վստահութիւն վայելել, ով ընդունում է քրիստոնէութեան ընդհանուր սկզբունքները, կամ զոնէ հանրամարդկային հաւատը առ Աստուած և առ հանդերձեալ կեանք: Մի քանի Նահանգներում ուղղակի ցոյց են տրուած կրօնի ընդհանուր ճշմարտութիւններ, որ ենթադրուած են իւրաքանչիւր կրօնական համայնքում. օրինակ Վեոմոնտի սահմանադրութեան մէջ ասուում է, որ «իւրաքանչիւր աղանդ կամ քրիստոնէական դաւանութիւն պէտք է շաբաթը կամ Տէրունական օրը (կիւրակէ) պահէ և աստուածպաշտութեան որևէ ձև ունենայ, որ նոցա կարծիքով ամենից շատ համաձայն կը թուայ Աստուծոյ կամքին»:

Ինքը, Հ. Ա. Նահանգների պետութիւնն էլ ունի իւր սահմանած կրօնը. այսպէս կոչուած ընդհանուր քրիստոնէութեան կրօնը: Այս արդէն երևում է այն պահանջներից, որ անում է նա պետական պաշտօն ուղղուներից կրօնական հաւատալիքների նկատմամբ: Այս մասին վկայում է նոյնպէս պետական ժողովրդական դպրոցներում կրօնական կրթութեան դատաւարութիւնը: Այս դպրոցներում կրօնի դասախօսութիւնը չի պատկանում քրիստոնէական ոչ մի դաւանութեան. նշանակուած է պետութեան կողմից ու ապացոյց է այն բանին, թէ պետութիւնը ինչպիսի կրօնա-

կան կրթութիւն և ուսում անհրաժեշտ է համարում իւրաքաչիւր քաղաքացու համար: Ապա, պետական կրօնի գոյութեան մասին վկայում է և այն փաստը, որ կառավարութիւնը պետական բարձրագոյն հաստատութիւնների, զօրքի, բանդերի և ուղղիչ հիմնարկութեանց համար կապելլաններ է պահում: Իսկապէս ասած այս կապելլաններն էլ մի որոշ դաւանութեան չեն պատկանում. նոքա Հ. Ա. Նահանգներից սահմանուած ընդհանուր քրիստոնէութեան սպասուորներ են: Ելի կան շատ պերճախօս փաստեր, որ հաստատում են Ամերիկայում պետական կրօնի գոյութիւնը — զոքա դատաստանական վճիռներն են, որոնք ցոլացնում են Ամերիկայի ժողովրդի սովորութիւններն ու հայացքները: Այսպէս Պենսիլվանիա Նահանգի բարձրագոյն դատարանը մի դատի ատիւ յայտնեց հետեւելը. «Քրիստոնէութիւնը ընդհանուր օրէնսդրութեան մի մասն է: Նրա հիմունքները լայն, հաստատուն և խոր են. նա է կազմում ժողովրդի իշխանութեան, շահերի և զգացմունքների հիմքը: Եթէ նրանից հեռացնենք բոլոր մասնակի հարցերը, նա կըլինի բարոյականութեան ամենամաքուր սիստէմը, մարդկային ամեն օրէնքների ամենայուսալի օգնականը և միակ հաստատուն նեցուկը: Անհնար է իրագործել օրէնքները, առանց ընդունելու Ս. Գրքը, իբրև նոցա հիմք: Սովորական ձևի եր-

դումը մի անվաւեր և անվարկ գրքի առաջ կըլինէր ամենսանմիտ մի ձևականութիւն»: Այս նկատմամբ աւելի նշանաւոր է Նիւ-Եօրկ Նահանգի բարձրագոյն դատարանի գեկուցումը. «Քրիստոնէութիւնը, ասում էր նա յանձին իւր կանցլեր Կենտի՝ իւր ընդհանուր մտքով, իբրև Ս. Գրքի մէջ յայտնուած և ցոյց տրուած կրօն, մեր օրէնսդրութեան անձանօթ չէ: Անբարոյականութեան առաջն առնող և արգելող օրէնսդրութիւնը (СТАТУТЪ) սրբացնում է շաբաթութեալ առաջին օրը և նրա խախտումը համարում է անբարոյականութիւն: Երգումը հրամանագրող ակտը ընդունում է ձեռներն Աւետարանի վրայ դնելն ու համբուրելը որպէս երգութիւն սովորական եղանակ:... Ինչ որ հակառակում է քրիստոնէութեան, յայտնի կերպով ձգտում է քաղաքացիական կառավարութեան քանդելուն... Աստուածանարգութիւն \*) համարում է Աստծուն կամ կրօնը չարամտութեամբ ալպանելը... Քրիստոնէութիւնը յանձին նորա Հիմնագրի այլանելը... Այսպիսի ոճիրները միշտ անկախ են համարւում կրօնական կանոնադրութիւնից կամ եկեղեցու իրաւունքներից: Այդ ոճիրները քննւում են իբրև քաղաքացիական համայնքի էական շահերը շօշափող գործողութիւններ և պատժւում են ընդհանուր օրէնքի

\*) Богохульство.



Համաձայն: Բայց մենք պարտաւոր չենք Մահ-մեդի կամ Մեծն Լամայի վրայ եղած նոյնպիսի յարձակումները պատժել և այս այն պարզ հիման վրայ, որ մենք քրիստոնեայ ժողովուրդ ենք և երկրի բարոյականութիւնը խոր կերպով արմատացած է քրիստոնէութեան և ոչ թէ այդ խաբեբաների վարդապետութեան և աստուածաշտուութեան մէջ»: Իբրած օրինակներից երևում է, որ Հ. Ա. Նահանգները չեն համարում կրօնը անհատի մասնաւոր գործ, այլ տալիս են նրան պետական կարևոր նշանակութիւն, իբր մարդկային օրէնքների նեցուկի, իբրև քաղաքացիական կարգի հիմքի: Նոքա ընդունում են կրօնի և պետութեան մէջ ներքին սերտ կապ: Խղճի ազատութիւնը յարգելու պատճառով Հ. Ամերիկայի պետութիւնը չի վստահում որևէ մի դաւանութիւն պետական կրօնի աստիճանին հասցնել: Բայց նա բոլոր քաղաքացւոց համար պարտադիր է համարում քրիստոնէական կրօնի և բարոյականութեան գլխաւոր հիմունքները, որոնք ընդհանուր են բոլոր դաւանութիւնների համար և պատժում է կրօնի և բարոյականութեան կոպիտ վիրաւորանքը: Քրիստոնէութեան հաւատքի և բարոյականութեան այս ընդհանուր սկզբունքները կազմում են Հ. Ա. Նահանգների կրօնական կողէքսը: Այս կողէքսով են չափում բոլոր մասնաւոր կրօնական համախմբութիւնների

դաւանութիւնները: Այդ դաւանական խմբակցութիւններն ազատութիւն կարող են վաշելի միայն այն պայմանով, եթէ համաձայն են այդ կողէքսին: Աղանդների և կրօնական խմբակցութիւնների պետական կողէքսի հետ համաձայն լինելու աստիճանը որոշում է նոցա նշանակութիւնը, ինչպէս պետական կրօնների:

Արևմտեան Եւրոպայի պետութիւններից ամենից առաջ և կատարեալ կերպով Բելճիալում ներմուծուեցաւ պետութիւնը եկեղեցւոց բաժանելու սկզբունքը: Բելճիալում պետութիւնն ու եկեղեցին բոլորովին անկախ և իւրաքանչիւրը իւր համար է ապրում և գործում իւր շրջանում. սակայն և այնպէս եկեղեցու դիրքը նշանաւոր է: Նոցա հանդիպման միակ արտաքին իրաւական կէտը, որ մի շեղում է ընդհանուր սկզբունքից, սահմանադրութեան մէջ լիշուած պետութեան պարտականութիւնը է՝ կրօնի սպասաւորներին իւր հաշուով պահել և նոցա կենսաթոշակ տալ:

Իտալիայում պետութեան և եկեղեցու յարաբերութիւնները, համաձայն 1871 թ. Ապահովութեանց օրէնքին, կազմուեցան նոր պետութեան սկզբունքներից նշանաւոր խոտորումներով, շնորհիւ այն հանգամանքի, որ Հռոմումն է կաթոլիկ եկեղեցու գլխի աթոռը: Սակայն այնուամենայնիւ, ընդհանուր առմամբ Իտալական պետութեանը յաջողել է համա-

րեալ բոլորովին բաժանուէլ եկեղեցուց: Քաղաքացիական և պետական բոլոր լարակցութիւնները զատուած են կրօնի ազդեցութիւնից: Մետրիկները յանձնուած են պետական աստիճանաւորներին: Իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի իւր որդւոց մկրտել, եկեղեցական ծէսով կատարել ամուսնադրութեան ակտը, թաղել իւր ազգականներին եկեղեցական աղօթքներով: Պետութիւնը ս'չ արգելում է, ս'չ էլ հետաքրքրւում այդ գործով: Եկեղեցական իշխանաւորները կարող են մկրտողների, ամուսնացողների և մեռնողների ցուցակներ պահել, բայց դոքա վաւերագրի նշանակութիւն չեն ունենայ քաղաքացիական մտքով: Քաղաքացիական հանրակեցութեան մէջ եկեղեցական պատիժներն իրաւական հետեւանք չեն ունենում առանց աշխարհական իշխանութեան որոշման: Պետութիւնը եպիսկոպոսներից թագաւորին հաւատարմութեան երդում չի պահանջում և չի ստիպում, որ նոքա կառավարութեան համար աղօթեն: Պետութիւնն իւր գործերի մէջ անկախութիւն ձեռք բերելով, այնուհետեւ եկեղեցուն ևս նրա ներքին գործերի մէջ կատարեալ ազատութիւն է տալիս: Իտալական կառավարութիւնը հրաժարուեցաւ Exequatur, Placet և եկեղեցական իշխանութեան կարգադրութիւնների հրատարակման և իրագործման համար

պահանջուելիք զանազան ձևի հաւանութեան իրաւունքներից: Նա լետ կացաւ նոյնպէս դատաբողոքներ \*) ընդունելու իրաւունքից եկեղեցական իշխանաւորների այնպիսի գործողութիւնների վրայ, որոնք վերաբերում են կրօնական գործերին: Եկեղեցական իշխանաւորների գործունէութեան ազատութիւնը սահմանափակելու պայմանն այն է, որ նոքա չհակասեն պետական օրէնքներին կամ հասարակական կարգին և մասնաւոր անձանց իրաւունքներին չգիպչեն: Այս պայմանի խախտման դէպքում այդ կարգադրութիւններն օրէնքի աչքում նշանակութիւն չեն ունենայ և որոշ դէպքերում կենթարկուեն քրէական պատժի. նմանապէս ի նկատի ունենալով մասնաւոր վիրաւորուած մարդու զանգատը, կարող են համարուել անվաւեր: Եկեղեցական պատօնեաներ նշանակելու իրաւունքը պատկանում է եկեղեցական իշխանութիւններին, միայն թագաւորին թողնելով առաջ գոյութիւն ունեցող պատրոնատի տեղական իրաւունքը, մասնաւոր իրաւունքի սկզբունքների համաձայն: Պաշտօնի հետ կապուած արտաքին արտօնութիւնները վայելելու համար օրէնքը պահանջում է, որ ընտրեալները պետութեան հպատակներից լինեն և որ իւրաքանչիւր ընտրութեան դէպքի մասին կառավարութեանը յայտնուի: Կաթոլիկ կղերն

\*) Апелляція.



Իտալիայում իրաւունք ունի եկեղեցական սպասաւորութեան գործերի մասին խորհրդակցելու համար ազատ ժողովներ անելու: Վառավարութիւնը չի հետաքրքրում աստուածաբանական կրթութեամբ և իւր համալսարաններում փակեց աստուածաբանական ֆակուլտետները: Վաթուիկ եկեղեցին կարող է ունենալ իւր սեմինարիաները, ճեմարանները, կոլլեժները և ուրիշ կրթական հաստատութիւններ, ինչպէս ընդհանուր ուսման բնաւորութիւն ունեցող, նոյնպէս և լատիպէս քահանայացուներ պատրաստելու համար: Եկեղեցական իշխանութիւնները կարող են ազատօրէն հիմնարկել այդպիսի ուսումնարաններ և կառավարել: Միայն թէ ընդհանուր ուսում մատակարարող եկեղեցական սեմինարիաները գաւառական ուսումնական կառավարութեան տեսչութեանն են ենթարկուած: Ուսումնական տարուայ սկզբին եկեղեցական վարչութիւնը պարտաւոր է յայտնել այդ ուսումնական կառավարութեանը այս ուսումնարանների վարիչներին և ուսուցիչներին ցուցակը և մինիստրութեան ցուցմամբ պաշտօնից հեռացնել անընդունակներին կամ անարժաններին: Եթէ հոգեւոր վարչութիւնը ցանկանում է, որ հոգեւոր ուսումնարանների աւարտական քննութիւնները նոյն նշանակութիւնն ունենան, ինչ որ պետական դպրոցների քննութիւններն ունին, այն ժամա-

նակ ուսումնական ծրագրի նկատմամբ պիտի համակերպուի վերջիններս գաւառի թացին: Հոգեւորականութեան պահած ուսումնարանների վրայ աշխարհական դպրոցների կառավարութեան ունեցած հսկողութիւնը չի տարածոււմ կրօնական կրթութեան, եկեղեցական պատմութեան, եկեղեցական իրաւունքի և աստուածաբանական առարկաների դասաւանդութեան վրայ: Իտալիայում վանքերը զբիւլուած են իրաւաբանական անձերի \*) իրաւունքներից և գոյութիւն ունին իբրև ազատ համայնքներ, նոցա անդամները չեն վայելում ոչ մի հասարակական արտօնութիւն, օրինակ զինւորական ծառայութիւնից կամ զբանական հարկերից ազատութիւն: Օրէնքի աչքում կրօնաւորութեան ուխտերը ոչ մի իրաւական նշանակութիւն չունին, օրէնքը չի ճանաչում նմանապէս ոչ մի վանքի վանահօր: Մանկահասակ կամ ոչազատագրուած տղայոց վանք մտնելու կամ կրօնաւորութեան ուխտ տալու դէպքում, նոցա ծնողները դատական կարգով կարող են վանքից լետ պահանջել իրանց տղայոց: Վանքից կամաւորապէս դուրս գալը քաղաքացիական լարակցութիւնների մէջ չի կարող ոչ մի անհաճոյ հետեւանք առաջ բերել: Իտալիայում վանքերի ամբողջ անշարք գոյքը լարքունիս է գրաւուած և պետական ղեկավար է դարձուած: Այս

\*) Юридическое лицо.

կայքերից ստացած եկամուտներից 30°-ը գնում է յօգուտ պետութեան, իսկ 70°-ը մտնում է եկեղեցական ֆօնդի մէջ, որ բաշխուում է ուսման ու բարեգործական հաստատութիւններ և եկեղեցիներ պահելու համար: Եպիսկոպոսութիւններն և ծուխերը իրաւարանական անձ են համարուում:

Պէտք է նկատել, որ եկեղեցական կառավարութեանը վերաբերեալ բոլոր գործերն էլ հօ միայն եկեղեցական իշխանութեան անսչութեան չեն ենթարկուած: Այժմ էլ կան և խառն բնութեան գործեր, որոնք կարող են լուծուել և վճռուել միայն պետական և եկեղեցական իշխանութեանց երկուստեք համաձայնութեամբ: Այգպիսի գործերին պատկանում են՝ ծխերի բաշխման փոփոխութեան վերաբերեալ գործերը. եպիսկոպոսութիւնների, սեմինարիաների և այլ եկեղեցական հաստատութիւնների հիմնարկման, փակման կամ միացման վերաբերեալ գործերը. հոգևոր կտակը կամ եկեղեցական գույքը ուրիշ ոչ բուն նպատակի նշանակելը. բացի աստուածպաշտութեան նպատակներից զանգահարութեան նաև այլ նպատակների համար գործադրելը. տաճարից գուրս տեղի ունեցող եկեղեցական լուղարկաւորութեանց վերաբերեալ գործեր. եպիսկոպոսներից իրանց եպիսկոպոսութիւնների ստանձնելը ու գրանց յատկացրած ասպրուստի միջոց-

ների ստանալը. հոգևոր հաստատութեանց բոլոր կարևոր տնտեսական խնդիրները: Հռոմ քաղաքը և նրա մօտի 6 եպիսկոպոսութիւնները յատուկ դրութեան մէջ են գտնուում, հոգևոր գործերի մէջ ենթարկուում են պապի անկոնտրոլ (ինքնակախ) տեսչութեան և տնօրինութեան:

Պապի, որպէս կաթողիկ աշխարհի գլխի, անձնաւորութիւնը բացառիկ պալմանների մէջ է դրուած ապահովութեանց օրէնքի հիման վրայ: Պապի անձնաւորութիւնը սրբազան և անմատչելի է համարուում, նրան վերաւորելը վեհափառութեան վերաւորանք է համարուում: Իտալիայում պապը թագաւորի յարգանք է վայելում և իրաւունք ունի պահնակ պահելու իւր համար: Նրան պետական գանձարանից նշանակուած է տարեկան 3,225,000 լիրա: Նրա տրամագրութեան տակ են դրուած Վատիկանն ու Լատերանի պալատները: Պապի վեհարանի օտարերկրեայ դեսպանները իտալական թագաւորութեան մէջ վայելում են դիպլոմատիկ ազէնտների իրաւունքներ, ինչպէս և պապի դեսպանները այլ պետութեանց արքունիքներում: Պապի աթոռանիստը կամ ժամանակաւոր բնակավայրը, նույնպէս և ընդհանրական ժողովի կամ կոնկլաւի կացարաններն ազատ են պետական աստիճանաւորների հսկողութիւնից և պաշտօնական այցելութիւնից: Պապական աթոռը թափուր լինելու

դէպքում՝ աշխարհական իշխանութիւնը չպէտք է արգելք հանդիսանայ, որ կարգինալներն ընտրութեան համար կոնկլաւ անեն. նոյնպէս և անարգել պէտք է թոյլ տրուին ընդհանրական ժողովները: Պայն իւր հոգևոր պաշտօնին վերաբերեալ պարտականութիւնները կատարելիս կատարեալ ազատութիւն է վայելում և իրաւունք ունի իւր որոշումները յայտարարել բազիլիկների և Հռոմի եկեղեցիների դռների վրայ կախելով: Այն հոգևորականները, որոնք օժանդակում են պապի պարտականութիւնների կատարմանը, նոյնպէս ազատ են աշխարհական կառավարութիւնից այդ գործում: Պայն իրաւունք ունի անկոնտրոլ յարաբերութիւն ունենալ եպիսկոպոսների և ամբողջ կաթողիկ աշխարհի հետ: Այս իրաւունքն իրագործելու համար նա կարող է ունենալ սեփական պոստ և հեռագրատուն: Եկեղեցական սեմինարիաները, ակադեմիաները, կոլլէժներն և այլ բոլոր հաստատութիւնները, որ նպատակ ունին կղերին ուսում ու կրթութիւն տալ և գտնւում են Հռոմում և նրան կից 6 եպիսկոպոսութիւնների շրջանում, բացառապէս կախումն ունին սրբազնազոյն աթոռից և ազատ են պետական դպրոցների վարչութեան վերահսկողութիւնից: Աւելորդ չէ նկատել, որ պապը մերժում է «ապահովութեանց օրէնքը», ընդունելով այդ Բրիտտոսի արքա-

յութեան նկատմամբ մի ակներև ծաղր. չի դիպչում ամենեւին իրան նշանակուած տարեկան ռոճիկին, համարելով այդ Յուդայի արծաթ. իրան բանտարկեալ և գերի է ներկայացնում, և դիմում է արևմտեան Եւրոպայի պետութիւններին, որ ազատեն իրան գերութիւնից և լեռ դարձնեն առաջուայ թագաւորութիւնը:

Գերմանիայում էլ նոր պետութեան ոչ բոլոր սկզբունքները, որոնք բնորոշում են նրա և եկեղեցու յարաբերութիւնները, միատեսակ հետևողականութեամբ են ներմուծուած: Լոզճի անձնական ազատութեան սկզբունքը այստեղ աւելի առաջ է գնացել, քան Հ. Ա. Նահանգներում: Մինչ դեռ Ամերիկայում թէ օրէնքը և թէ սովորոյթը կրօնական ազատամտութեան որոշ սահմաններ են դժում, այստեղ ամեն մարդ տէր է իւր կրօնական համոզման, միայն թէ այդ չչայտնէ հրապարակօրէն այնպիսի կոպիտ ձևով, որ վիրաւորական լինէր ուրիշների համոզմունքների համար կամ օրէնքով դատաւարտելի յանցանք համարւէր: Եւ փորձը ցոյց է տալիս, որ Գերմանիայում նոր ձևի բաւական հեթանոսներ կան արդէն, որոնք քրիստոնեայ ծնողների զաւակներ են:

Բայց նոր պետութեան և կրօնի յարաբերութեան երկրորդ սկզբունքը, որով թոյլ է տրւում գաւառական խմբակցութիւններ կազ-



մելու կատարեալ ազատութիւն, միայն թէ նոքա բոլորն էլ մասնաւոր իրաւական ընկերակցութիւնների բնաւորութիւն պէտք է կրեն, — դործ է ածուծ զգալի շեղումներով յօգուտ հին սիստեմի: Իհարկէ, Գերմանական պետութիւնների մեծ մասի մէջ (բացի Սակսոնիայից և Բաւարիայից, ուր պահանջուծ է կառավարութեան կողմից նախապէս ստացուած թոյլատուութիւն) թոյլ է տրուծ ազատօրէն կրօնական ընկերակցութիւններ կազմել, առանց կառավարութեան թոյլատուութեան՝ խմբակցութիւններ կազմելու այն ընդհանուր իրաւունքի հիման վրայ որ ունին քաղաքացիները: Այգալիսի կրօնական ընկերակցութիւնները հաւասար են մասնաւոր իրաւական ազատ ընկերակցութիւնների և իրաւաբանական անձի իրաւունքներ չունին: Այգալիսի դրութեան մէջ են գտնուծ օրինակ՝ Պրուսիայուծ Իւվինգիանները, Գառբիստները, Կվալեոները, Անգլիկանները և այլն, Բադէնուծ՝ Հին-Լիւթերականները, Միննոնիտները, Հեռնգուտերները, Անաբաբտիստները: Քաղաքացիական իրաւունքի շրջանուծ իրաւունակութիւն ձեռք բերելու համար (այսինքն անշարժ սեփականութեան տէր գտնալու իրաւունք) կրօնական խմբակցութիւնը պէտք է դիմէ կառավարութեանը, որ կարող է այդ իրաւունքը տալ կարգադիր կամ օրէնսդիր ճանապարհով: Կառա-

վարութիւնից քաղաքացիական իրաւունակութիւն շնորհելու գէպքուծ բնականաբար հարց է առաջ գալիս, թէ ինչ սկզբունքներով է առաջնորդուծ այս կամ այն կրօնական ընկերակցութիւնը: Այս առթիւ Գերմանական պետութիւնների օրէնքների մէջ կան հետեւեալ գրական պահանջները: Միայն այն կրօնական ընկերակցութիւնը կարող է պետութիւնից քաղաքացիական իրաւունակութիւն սպասել, որն իւր գաւաւնութեան և կանոնադրութեան մէջ չունի ոչ մի կետ, որ հակասէր գէպի Աստուած ունենալիք պատկառանքի զգացմունքին, բարոյականութեան պահանջներին և երկրի օրէնքներին, նոյնպէս և եթէ նա միտուծ չունի միւս կրօնական խմբակցութիւնների քաղաքական, քաղաքացիական և կրօնական իրաւունքները քանգելու (Հեսսենի օրէնք 1875 թ. 23 ապ. Բադենի օրէնք 1860 թ. 3 հօկտեմ. Վիւրտենբերգի օրէնք 1862 թ. 9 ապրիլի): Երբեմն իրաւաբանական անձի իրաւունքներ տալը կախուած է լինուծ նաև խմբակցութեան ունեցած անգամների քանակից և նրա կազմակերպութեան լրջութեան աստիճանից. (պրուսական օրէնքներ 1874 թ. 12 յունիս, 1875 թ. 7 յուլիս): Իբրև օրինակ այսպիսի կրօնական խմբակցութեան, Պրուսիայուծ կարելի է մատնանիշ անել Նիդերլանդական վերանորոգողների, Բադէնուծ՝ Գեր-

ման-կաթողիկները վրայ: Քաղաքացիական իրա-  
ւունակութիւն ձեռք բերելը չի փոխում այս  
կամ այն կրօնական ընկերակցութեան ունեցած  
պետական դիրքը նրա նախկին դիրքի հետ հա-  
մեմատած, այժմ էլ նա մնում է մասնաւոր իրա-  
ւական բնաւորութիւն ունեցող մի ընկերակցու-  
թիւն: Բայց քաղաքացիական այս իրաւունակու-  
թիւն ձեռք բերելու մէջ, որ հիմնուած է պե-  
տութեան թոյլատուութեան և դրա հետ միասին  
ընկերակցութեան կրօնական սկզբունքների գնա-  
հատութեան վրայ, կայ արդէն որոշ չափի շեղում  
նոր պետութեան այն սկզբունքից, որ պահանջ-  
ում է կրօնական ընկերակցութիւնների բացման  
կատարեալ ազատութիւն և նոցա կատարեալ հա-  
ւասարութիւն քաղաքացիական և քաղաքական  
տեսակետից: Սակայն սրանով դեռ ևս չի վերջա-  
նում կրօնական ընկերակցութիւնների մէջ քա-  
ղաքական դիրքի կողմից եղած աստիճանաւորու-  
թիւնը, որ առաջ են բերում Գերմանիայի օրէնք-  
ները և գործնականը (практика): Բացի մաս-  
նաւոր իրաւական բնաւորութիւն ունեցող կրօնա-  
կան ընկերակցութիւններից, Գերմանիայի օրէնք-  
ները թոյլ են տալիս այնպիսի ընկերակցութիւն-  
ներ, որոնք ունին հանրային \*) ընկերակցու-  
թիւնների կամ հանրային իրաւունքի \*\*) հիմ-

\*) Публичный.

\*\*) Публичное право.

նարկութիւնների բնաւորութիւն: Այս տեսակ  
կրօնական ընկերակցութիւնների բնորոշ յատ-  
կանիշն այն է, որ կառավարութիւնն էլ իւր  
կողմից ճանաչում է սոցա կրօնական վարդա-  
պետների առաջնորդական իշխանութիւնը, այն  
վարդապետների, որոնք կրօնական ընկերակցու-  
թեան գլուխ են կանգնած և կառավարում են  
նրա ներքին գործերը: Ապա այս հանրային իրա-  
ւունքի ընկերակցութիւնների շատ բնական՝ թէև  
ոչ անխուսափելի, առաւելութիւնն է՝ ունենալ  
սեփական համայնական գոյքի իրաւունք և դրա  
համար հաւաքել կամաւոր նուէրներ կամ ընկե-  
րակցութեան անդամների վրայ պարտադիր տուրք  
դնել պետական իշխանութեան հովանաւորու-  
թեան տակ, և իրաւունք ունենալ, որ պետու-  
թիւնը ճանաչէ և յարգէ հոգևոր իշխանութեան  
կողմից ընկերակցութեան անդամների վրայ դրած՝  
կարգ ու կանոնի վերաբերեալ բոլոր կարգա-  
դրութիւններն ու պատիժները: Բացի դրանից  
հանրային ընկերակցութիւնները վայելում են  
ուրիշ շատ առաւելութիւններ, որ կրկին մա-  
սամբ բնորոշում են նոցա քաղաքական դիրքը:  
Այդպիսի առաւելութիւնների և իրաւունքների  
կարգին պատկանում են՝ մասնաւոր անձանց,  
կամ ուրիշ զաւանուութեանց ընկերակցութիւն-  
ների կողմից ստացած վերաւորանքների դէմ  
քրեական պաշտպանութեան իրաւունք, աս-

տուածպաշտութեան շինութիւնների և եկեղեցական տների տնային հարկից ազատութիւն. (Պրուսիայի օրէնք 1861 թ. 21 մարտի). գերեզմանատների հողային հարկից ազատութիւն. կրօնին ծառայողների ազատութիւնը դատաւորի և երդուեալ դատաւորի պարտաւորութիւններից: Հարկաւոր է նկատել, որ լիշուած հանրային հաստատութիւններին յատկացուած այս երկրորդական իրաւունքներն ու արտօնութիւնները վաճելում են նաև մասնաւոր իրաւական կրօնական այն ընկերակցութիւնները, որոնք ունին ճանաչուած ընկերութիւնների իրաւունքներ, զանազանուելով այն կրօնական ընկերակցութիւններից, որոնք չունին ամենևին համայնական իրաւունակութիւն: Գերմանական պետական օրէնքների համաձայն (Բադէն, Վիւրտեմբերգ, Պրուսիա) հանրային ընկերակցութիւններ են համարուում հրէական համայնքները, նոյնպէս և քրիստոնեայ դիսսիդենտների մի քանի համայնքներ, որոնք բաժանուել են տիրող եկեղեցուց, օրինակ Պրուսիայում Հեռնգուտերների և այսպէս կոչուած Հին-Նութերականների ընկերակցութիւնները:

Հանրային բնաւորութիւն ունեցող կրօնական ընկերակցութիւններից մի առանձին խումբ են կազմում քրիստոնեայ դաւանութիւնների պատմական մեծ խմբակցութիւնները՝ կաթոլիկ

եկեղեցին, բողոքական և վերանորոգիչ եկեղեցիները (եթէ կարելի է այդպէս ասել): Սօս ժամանակներս նոցա միացած է Պրուսիայում ու Բրաունշվայգում նաև Ստոր-Սակսեան համայնքների զաշնակցութիւնը \*), Սակսոնիայում՝ Գերման-կաթոլիկները Հադէնում և Նէսեան Հին-Կաթոլիկները: Քրիստոնեայ եկեղեցիների քաղաքական դիրքի հիմքը նոյնն է, ինչ որ վերևում լիշուած կրօնական հանրային ընկերակցութիւններին. նոքա զանազանուած են վերջիններից միայն յատուկ առաւելութիւններով, թէև կարևոր, բայց և այնպէս երկրորդական նշանակութիւն ունեցող: Քրիստոնեայ եկեղեցիների քաղաքական (պետական) գրութիւնը բնորոշուած է գլխաւորապէս նրանով, որ պետութիւնը ընդունում է այն հոգևոր իրաւունքները, որ պատկանում են այս կամ այն դաւանութեան եկեղեցական իշխանութեանը նոյն եկեղեցու անդամների նկատմամբ եկեղեցադիր կանոնների և կարգերի հիման վրայ. այդ իրաւունքները իւր գերիշխանական իրաւունքներին համասեռ է համարում. եկեղեցու կարգադրութիւններին կառավարչական նշանակութիւն է տալիս՝ եկեղեցական ընկերակցութեան ներքին շրջանում գործելու կատարեալ զօրութիւն շնորհելով նրանց: Պետութեան այսպիսի վերա-

\*) Конфедерация.





բերմունքի պատճառով՝ եկեղեցական իշխանութիւնը դառնում է, պետականի նման, հանրային բնաւորութիւն ունեցող մի իշխանութիւն: Իրանց իշխանութեանը ենթարկուած շրջանների նկատմամբ պետական և եկեղեցական իշխանութիւնները նրանով են տարբերւում միմիանցից, որ պետական իշխանութեանը պատկանում է գեր-իշխանութիւն, որի շնորհիւ նա կարող է ուղղած ժամանակը այսպէս կամ այնպէս կարգաւորել իւր հայեցողութեամբ եկեղեցու դիրքը, որպէս հանրային բնաւորութիւն ունեցող մի հիմնարկութեան. իսկ եկեղեցական իշխանութիւնը պետութեան թուլատուութեամբ պահպանում է իւր ինքնօրինութիւնը եկեղեցու ներքին գործերի մէջ, ուր պետութիւնն իրաւունք չի համարում միջամուխ լինել: Այս ընդհանուր սգիւրունքից բղխում են հետեւեալ եզրակացութիւնները. նախ՝ եկեղեցու ինքնօրինութիւնը ճանաչելուց հետեւում է, որ պետութիւնը սրանով ընդունում է եկեղեցու ունեցած կազմակերպութիւնը: Երա համար, երբ, օրինակ, գործը կաթոլիկ եկեղեցու մասին է, պետութեան համար էլ, ինչպէս և կաթոլիկ եկեղեցու կանոնների համաձայն, պապը համարւում է առաջին և ծայրագոյն եկեղեցական իշխանութիւն, միայն թէ ոչ գերիշխող՝ պետական մտքով: Պապը նոյնպէս և կաթոլիկ եկեղեցու կառավարութեան միւս

օրգանները եկեղեցու կանոններով սահմանուած իրանց պարտականութիւնները ազատ կարող են կատարել Գերմանական կայսրութեան մէջ գրտնուող անդամների նկատմամբ՝ այն սահմաններում, որ որոշում է պետական իշխանութիւնը: Երբ եկեղեցու իշխանութեան կողմից վերջին պայմանը իրագործուած է լինում, պետութիւնը չի միջամտում նոցա պարտականութիւնների կատարմանը: Պետութիւնը ընդունում է նաև կարգապահական պատիժները, որ դնում է եկեղեցական իշխանութիւնը, և իրան թույլ չի տալիս այդ պատիժների գէմ բողոքներ ընդունել: Պետութիւնը իրան կոչուած չի զգում ստիպելու, որ կատարեն կրօնական պարտականութիւնները և հնազանդ լինին եկեղեցական իշխանութեան կարգադրութիւններին, կամ դատի ենթարկելու եկեղեցու կարգապահութիւնը խանգարողներին կամ եկեղեցական պարտականութիւնները թերի կատարողներին: Երկրորդ՝ քանի որ պետութիւնը ճանաչում է եկեղեցու իւր ներքին շրջանում ունեցած ինքնօրինութիւնը, ապա եկեղեցական կեանքի նօրմաները պետութեան աչքում էլ ստանում են ինքնակախ օբյեկտիւ իրաւունքի \*) նշանակութիւն, միայն թէ ոչ պետութիւնից դրուած նեղ ու խիստ մտքով, այլ գործող պետութեան թուլատուութեամբ, հանրային յարակցու-

\*) Объективное право.

թեանց մի առանձին շրջանում, որ վայելում է իւր ներքին կարգը բարեկարգելու իրաւունակութիւն:

Արդ, ինչ ձև ունի Գերմանիայում արտօնեալ կրօնական հանրային ընկերակցութիւնների իրական գրութիւնը — այսինքն կաթոլիկ և բողոքական եկեղեցիների գրութիւնը (նոցա նման այլ ընկերակցութիւնների մասին կարեք չկայ խօսելու):

Ինքնօրինութիւնը, որ Գերմանիայում գործող օրէնքներն յատկացրել են կաթոլիկ եկեղեցուն, նրան ազատութիւն է տալիս անկախ կարգաւորել ներքին եկեղեցական յարակցութիւնները, այսինքն կրօնի վարդապետութեան, աստուածապաշտութեան, եկեղեցու կազմակերպութեան և կառավարութեան վերաբերեալ գործերը: Ի նկատի ունենալով այս ինքնօրինութիւնը, անտեղի կը լինի պետական peacet-ի գործածութիւնն եկեղեցական իշխանութեան հաստատած կանոնների նկատմամբ, որը (peacet-ը) գործադրում էր հին ժամանակ: Ուստի այդ վերացում է Գերմանական բոլոր պետութիւնների մէջ, բացի Բաւարիայից: Գրա փոխարէն բազմաթիւ Գերմանական պետութիւնների մէջ պահանջւում է, որ եկեղեցու յայտարարող կարգրութիւնները ծանուցուին պետութեան կառավարութեանը կամ յայտարարման հետ միաժամանակ (Վիւրտեմբերգ, Բադէն, Հեսսէն) կամ

դրանից առաջ (Սախսոնիա): Վերջին դէպքում յայտարարումը կախուած է պետութեան համաձայնութիւնից միայն այն կանոնադրութիւնների համար, որոնք վերաբերում են հասարակական յարակցութիւններին սահմանակից յարակցութիւններին — օրինակ՝ դպրոցական ուսման, ամուսնական գործերին, եկեղեցական տօներին: Յայտարարման այս ընդհանուր կարգին ենթարկւում են նաև դաւանաբանական հարցերին վերաբերող կարգադրութիւնները, որովհետև նոքա ևս երբեմն ունենում են կարևոր նշանակութիւն հասարակական և քաղաքական յարակցութիւնների համար, ինչպէս օրինակ 1870 թ. Վատիկանի ժողովի կարգադրութիւնները պապի անսխալականութեան և նորա ընդհանրական քահանայութեան մասին, կամ 1864 թ. պապի էնցիկլիկան «Syllabus errorum aetatis nostrae» յաւելւածով: Եկեղեցագիր կանոնադրութիւնները կորցնում են իրանց իրաւական նշանակութիւնը, եթէ նախքան յայտարարուելը չեն ներկայացուած եղել պետութեան ի հաստատումն, այն տեղերում, ուր որ այդ պահանջւում է: Իսկ այնտեղ, ուր եկեղեցագիր կանոնադրութիւնները յայտարարում են անկախ պետութեանը ներկայացնելուց կամ ներկայացման հետ միաժամանակ, պետութիւնը իրան է վերապահում այս կարգադրութիւնների վրայ

կոնտրոլի իրաւունք: Երբ պետութիւնը գտնէ, որ որոշ եկեղեցադիր կարգադրութիւն պետական գործող օրէնքներին հակառակ է և խախտում է հասարակական շահերը պետութեան դիտաւորութեան հակառակ, այն ժամանակ նա կարող է այդ յայտարարուած կանոնի կատարման դէմ ճնշող միջոցներ առնել: Երբ պետական և եկեղեցական իշխանութիւնների մէջ տարակոյս կամ վէճ է ծագում, թէ այս ինչ հարցը արդեօք եկեղեցական իշխանութեան միակողմանի և ազատ հայեցողութեան է պատկանում, թէ կարիք ունի նաև պետութեան իշխանութեան քննութեան, այդպիսի դէպքում վէճը լուծում է պետական իշխանութիւնը, որովհետև նրանից է կախուած սահմանել եկեղեցական իշխանութեան ինքնօրէն գործունէութեան շրջանի սահմանները:

Կաթոլիկ եկեղեցին իրան շնորհած ինքնօրինութեան զօրութեամբ իրաւունք ունի աստուածպաշտութիւնը հրապարակօրէն և հանդիսաւոր կերպով կատարել զանգահարութեամբ: Այս իրաւունքի մէջ չի մտնում անհրաժեշտօրէն բաց տեղերում ժամապաշտութիւն անելու և փողոցներում կրօնական յուղարկաւորութիւններ կատարելու իրաւունքը: Այն տեղերում, ուր ազգաբնակչութիւնը բաղկացած է զանազան դաւանութեանց պատկանող մարդկանցից, յու-

ղարկաւորութիւններն ու թափօրներն հեշտութեամբ կարող են դիպչել այլադաւանների կրօնական զգացմունքին և պատճառ տալ վիրաւորանքների, սրբկատակութեան (КОШУНСТВО) և այլն: Դրա համար կառավարութիւնը կրօնական խաղաղութիւնը և խղճի ազատութիւնը ապահովելու իրան վերապահած պարտականութեան շնորհիւ՝ իրաւունք է համարում իւր հայեցողութեամբ և նայած հանգամանքներին թոյլ տալ կամ արգելել այդպիսի յուղարկաւորութիւնները: Այս նկատմամբ եղած օրէնսդրական նորմաները միատեսակ չեն: Բաւարիայում դեռ 1818 թւի հին օրէնքն է գործում, որ եկեղեցական իշխանաւորների յուղարկաւորութիւնների համար արած բոլոր կարգադրութիւնները կառավարութեան հաստատումից կախուած է յայտնում: Իսկ արտաքոյ կարգի դէպքերում, օրինակ հանդիսաւոր յուղարկաւորութիւնների ժամանակ, որոնց մասնակցելու են և արտասահմանեան եկեղեցական պաշտօնեաներ, պէտք է թագաւորի թոյլատուութիւնը ստանալ: Գերմանական օրէնսդրութիւնների մեծ մասը կրօնական յուղարկաւորութիւնների և թափօրների կատարումը ենթարկում է տեղական ոստիկանութեան հսկողութեանը, փողոցների և հրապարակների ամբօրինների մասին եղած ընդհանուր օրէնքների հիման վրայ: Ըստ պրուսական օրէնքի՝

պահանջուով է ոստիկանութեան կանխական թույլատուութիւն միայն այնպիսի լուղարկաւորութիւնների և թափօրների համար, որոնք լինում են որևէ լստուկ, արտակարգ դէպքում և ոչ թէ սովորական ձևով: Նոյնպէս և առանց կառավարութեան թույլատուութեան չէ կարելի բաց հրապարակական տեղերում սրբերի պատկերներ, արձաններ և խաչեր դնել:

Եկեղեցական իշխանութիւնը ազատ իրաւունք ունի նոր տօներ հաստատելու կամ հները ոչնչացնելու: Բաւարեացի գործնականը, որ այս դէպքի համար կառավարութեան համաձայնութիւն է պահանջում, հին կարգերի մի մնացորդ է: Եկեղեցական իշխանութեան այս նկատմամբ արած կարգադրութիւնները իհարկէ նշանակութիւն ունին միայն եկեղեցու շրջանում. որպէս զի նոքա նշանակութիւն ստանան և պետութեան մէջ՝ պահանջում է կառավարութեան համաձայնութիւնը: Սովորաբար պետութեան օրացույցը լինում է եկեղեցականը: Կառավարութիւնը հիմք կունենար տօներ հաստատելու գործի մէջ խառնուելու, եթէ եկեղեցական իշխանութիւնը տօներ հաստատելիս չպահէր հարկաւոր չափը և տօների թիւը չափազանցութեան հասցնէր, այնպէս որ գրանից լառաջանար արդիւնաբերութեան և առևտուրի վնասուելու վտանգ և պետական աստիճանաւոր-

ների իրանց պարտականութիւնները կատարելու համար մեծամեծ դժուարութիւններ: Բայց Գերմանիայում դեռ ևս մի այդպիսի միջամիսման կարիք չկայ: — Եկեղեցական իշխանութիւնը պարտաւոր է կառավարութեան պահանջի համաձայն հրապարակական մաղթանքներ և հանդէսներ կատարել քաղաքացիական անցքերի և տօների առթիւ, նոյնպէս և սովորական ժամասացութեան մէջ աղօթել կառավարութեան համար, յատկապէս թագաւորի համար, նոյնիսկ եթէ նա ուրիշ դաւանութեան պատկանելիս լինի: Այս՝ եկեղեցու և պետութեան յարաբերութեան նախկին դաշնակցական սիստէմի մի մնացորդ է:

Հարկաւոր է նոյնպէս զանգահարման գործածութեան համար նկատել, օրինակ հրգեհներին, հեղեղների, կամ քաղաքական տօների ժամանակ հայրենասիրական զգացմունք զարթնցնելու և այդպիսի կենսական բնաւորութիւն ունեցող դէպքերի համար: Իսկապէս ասած, պետութիւնը չի կարող պարտադիր դարձնել եկեղեցու զանգի գործածութիւնը այդպիսի դէպքերի համար: Բայց գործնականը շատ լաճախ շեղում է այս հայեացքից: Երբեմն եկեղեցու զանգերը քաղաքացիական համայնքի ձեռքին են լինում. այս դէպքում ի հարկէ կարող են գործադրուել յօգուտ համայնքի շահերի՝ բացի

աստուածալաշտութիւնից, նաև այլ դէպքերում: Ընդհանրապէս հարկաւոր է ասել, որ Գերմանիայում հնուց այն հայացքն է արմատացել, թէ եկեղեցու զանգակները կարող են գործածուել և քաղաքացիական համայնքի նպատակների համար:

Եկեղեցու կառավարման նկատմամբ գոյութիւն ունին կաթոլիկ եկեղեցու և Գերման պետութիւնների մէջ հետևեալ փոխադարձ յարաբերութիւնները: Եկեղեցուն իւր ներքին գործերում ինքնօրինութիւն շնորհելով, Գերման պետութիւնները դրա հետ միասին պէտք է ընդունէին եկեղեցական կառավարութեան եղած կազմակերպութիւնը առանց որևէ քննադատութեան, և ուրեմն ամենից առաջ պէտք է ճանաչէին Գերմանական սահմաններում դրանու կաթոլիկ եկեղեցիների վրայ եղած պապական իշխանութիւնը: Սրանից ուղղակի հետևում է, որ պապին չպիտի նեղեն իրան հպատակող Գերմանական եպիսկոպոսների հետ անմիջական յարաբերութիւններ ունենալիս և որ պետական կառավարութեան կողմից ամեն մի վերահսկող միջոց, որ առաջ գործ էր ածւում, անտեղի է նոր պետութեան սկզբունքների տեսակետից: Այս կանոնը իւրացրել են Գերմանական պետութիւնները իրանց նորագոյն օրէնսդրութիւնների մէջ, բայց դարձեալ սահմանափակութիւններով:

Այսպէս Վիւրտենբերգում, Պրուսիայում, Հեսսենում պապը կարող է իւր կարգապահական իշխանութիւնը գործ ածել հոգևորականների վերաբերմամբ միմիայն տեղական Գերման կղերականներից ընտրած պատգամաւորների միջոցով: Սակսոնիայում գոյութիւն ունի մի օրէնք, որով եկեղեցու արտաքին գործերի դատաւարումը \*) պէտք է աւարտուի թագաւորութեան սահմաններում գտնուած բարձրագոյն դատարաններում և չի կարող ենթարկուել արտասահմանեան դատաւորների: Այս սահմանափակումը չնչին է և իսկապէս ասած, չի կաշող համարուել կաթոլիկ եկեղեցու գլխի իւր հպատակ իշխանութիւնների հետ յարաբերութիւն ունենալու մի ճնշումն: Նոյնը չի կարելի ասել Վիւրտենբերգի և Սակսոնեայի օրէնքների նաև մի ուրիշ պահանջի համար, այն է որ պապի կարգադրութիւնները պէտք է յայտարարուեն կամ ի կատարածուին միայն տեղական եպիսկոպոսների և առհասարակ եկեղեցական իշխանաւորների միջոցով: Այս պահանջը բաւական զգալի կերպով դիպչում է պապի կարգադրութիւնները յայտարարելու կանոնական եղանակին, որով բաւական է որ նոքա յայտարարուած լինին Հռոմում որպէսզի համայն պարտադիր նշանակութիւն ունենան:

\*) Судопроизводство.



Եկեղեցական իշխանութեան իրաւունքները թուին է պատկանում— հիմնարկել եկեղեցական հաստատութիւններ և պաշտօններ. հաստատել, օրինակ, եպիսկոպոսութիւններ, ծխեր և այլն. ըստ ժամանակի պահանջի նոցա մէջ փոփոխութիւններ անել: Սակայն եկեղեցական իշխանութիւնը այս դէպքում չի կարող վարուել առանց պետական կառավարութեան համաձայնութեան կամ գործակցութեան: Ար եկեղեցական իշխանութիւնը պետական իշխանութեան հետ պէտք է համաձայնութիւն կայացնէ այս դէպքում շատ բնական է եկեղեցու այն քաղաքական գրութեան պատճառով, որով նա հանրային բնաւորութեան արտօնեալ հաստատութիւն է հանդիսանում: Այս գործին պետական կառավարութեան մասնակցելը պէտք է արտալայտուի նրանով, որ նա վերահսկէ, թէ՛ արդեօք նոր բացուելիք հաստատութիւնների նիւթական ապահովութիւնը բաւական է, արդեօք ծխերի բաշխման այդ փոփոխութիւնից որեւէ մէկը վնաս չի կրում, արդեօք ազգաբնակչութեան համար դժուար չի լինի պահել այդ նորահիմն հաստատութիւնները և այլն:

Կաթոլիկ եկեղեցին բացառապէս իւր գործն է համարում քահանայացուների ուսման գործը, որովհետև ձեռնհաս (կոմպետենտ) դատողներ այս խնդրում կարող են լինել միայն եկեղեցական իշխանութեան ներկայացուցիչները: Բայց

չի կարելի ուշադրութեան չառնել այս գործում և պետութեան շահերը: Հոգևորականութիւնը իւր հովուական պարտականութիւնները կատարելու ժամանակ ժողովրդի հետ մօտիկ շփում ունի, կարող է նրա մտքերի և համոզմունքերի վրայ ազդել: Բացի դրանից, ժողովրդական կրթութիւնը գանձում է հոգևորականութեան գորեղ ազդեցութեան տակ: Հասկանալի է սրանից յետոյ, թէ ինչ մեծ կարևոր նշանակութիւն ունի կառավարութեան համար հոգևորականութեան ուսման ուղղութիւնը: Այս դէպքում պետութեան ամենագլխաւոր հոգսն այն է, որ այդ ուսումը ներշնչուած չլինի անդրլեռնականութիւնից (ультрамонтаншя), որ այնքան աղմկարար և վնասակար է ընդհանուր շահերի համար: Այս նպատակին հասնելու համար Գերմանիայում պահանջում է քահանայացուներից, որ նոքա ունենան ընդհանուր գիմնագիական ուսում և ներկայացնեն հասունութեան վիայական: Ապա Գերմանական օրէնքն այդ քահանայացուներին պարտաւոր է համարում, որ նոքա պետական համալսարաններից մէկում լսեն աստուածաբանութեան եռամեայ դասընթացը, ուր դասախօսութիւնը լինում է եպիսկոպոսի և պետական իշխանութեան երկկողմանի ազդեցութեան ներքոյ, հետևապէս և զերծ պէտք է լինի միակողմանիութիւնից: Գործ-

նական մասնագէտ քահանայացուներ պատրաստելու համար եկեղեցական իշխանութիւնն իւր կողմից իրաւունք ունի բաց անել և պահել հոգևոր սեմինարիաներ: Սրանք կառավարութեան հսկողութեան տակ են գտնուում. այդ հսկողութիւնը սակայն սահմանափակուած է սեմինարիատների միայն տնական կեանքով և կարգապահութեամբ:

Գերմանական օրէնքը հոգևոր պաշտօնեայ կարգելու իրաւունքը տալիս է եկեղեցական իշխանութեան: Գերմանիայում գործածութիւնից դուրս է եկել երկրի բարձրագոյն կառավարչի պատրոնատի իրաւունքը (патронатское право) հոգևոր պաշտօնների համար թեկնածուներ ներկայացնելու: Անտեղի է համարուած նոյնպէս հաստատելու իրաւունքը, որ ունէր կառավարութիւնը եկեղեցական իշխանութիւնից նշանակուած քահանայացուների նկատմամբ, որ յառաջ էր եկել եկեղեցու և պետութեան դաշնակցական յարաբերութեան ժամանակ: Միայն Բաւարիայում մինչև այժմ գործ է ածուած այս իրաւունքը, իբրև հնութեան մի մնացորդ: Եկեղեցական պաշտօնների նշանակելը ոչ պակաս կարևորութիւն ունի և պետութեան համար՝ ի նկատի ունենալով հոգևորականութեան ժողովրդի նկատմամբ ունեցած ազդեցիկ դիրքը և կաթոլիկ հոգևորականութեան մէջ տիրող ուլ-

տրամոնտան զաղափարները: Գերմանական պետութիւնները, որպէս զի հեռու պահեն իրանց ոչ ցանկալի ուղղութեան անձերից, պահանջում են, որ քահանայացուները լինեն այն պետութեան հպատակներից, որի մէջ պէտք է գործեն նոքա (Վիւրտենբերգ, Բաւարիա, Բադեն) կամ պատկանին Գերման ազգութեան (Պրուսիա, Սախսոնիա, Հեսսէն): Բացի դրանից, պետութիւնն ի հարկէ չի կարող թող տալ, որ հոգևոր աստիճան ընդունեն այնպիսի անձինք, որոնք արատաւորել են իրանց անուներ քաղաքական գործերի մէջ կամ դատաստանուած դատապարտուել: Որպէս զի պետական իշխանութիւնը կարողանալ իւր շահերը պաշտպանել քահանայագործ պաշտօնեաներ կարգուելիս և ստուգէ այն օրէնքների կատարումը, որ սահմանուած են այդ դէպքի համար, (օրինակ ուսումնական ցենզի նկատմամբ) նա պահանջում է եկեղեցական իշխանութեան ներկայացուցիչներից, որոնք այդ քահանայացուներին աստիճան տալու իրաւունք ունեն, որ նոքա յայտնեն պետութեանը ընտրուած թեկնածուների անունները և ձեռնադրութիւնը չկատարեն մինչև այն ժամանակ, երբ ձեռնադրութեան անարգելութեան համար կառավարութիւնից զեկուցուած լըստանան, կամ այդ զեկուցման ժամանակամիջոցը անցնելուց յետոյ: (Ժամանակամիջոցը նշա-

նակուած է Պրուսիայի օրէնքի մէջ): Մի քանի պետութիւնների (Պրուսիայ, Սակսոնիա) օրէնքներով կառավարութիւնը՝ որոշ անձնաւորութեան ձեռնադրութեան դէմ առարկելիս, պէտք է ճիշտ ձեւակերպէ ձեռնադրութեան արգելառիթ պատճառները և այդ պատճառները հաստատող փաստեր առաջ բերէ, միևնոյն ժամանակ եկեղեցական իշխանութեան միջոց տալով այդ առարկութեան շարժառիթների դէմ բողոքելու: Եթէ կառավարութեան առարկութիւնը չյարգուի և առարկութեան ենթարկուած թեկնածուն ձեռնադրուի, այն ժամանակ այդ ձեռնադրութիւնը չպէտք է իրաւական նշանակութիւն ունենայ (ըստ օրինաց Պրուսիայի, Հեսսէնի, Բադէնի, Վիւրտեմբերգի):

Գերմանական իրաւունքը կաթոլիկ հոգևորականութիւնից պահանջում է, որ պաշտօն ստանձնելիս թագաւորին հաւատարիմ մնալու երդում տայ և խոստանայ պետական օրէնքներին հնազանդ մնալ: Պրուսիայի մի քանի տեղերում երդում պահանջում են միայն եպիսկոպոսներից, այլ տեղերում բոլոր հոգևորականներից: Ինչ վերաբերում է իրան՝ կաթոլիկ եկեղեցուն, նա այս երդումն այլ կերպ չի ընդունում, քան այնպէս, որ այդ երդումը իւր մէջ չի պարունակում եպիսկոպոսի համար պարտականութիւն հնազանդ լինել այնպիսի օրէնքների,

որ անհամաձայն են եկեղեցական կանոններին և եպիսկոպոսի՝ ինչպէս եկեղեցու ծառայողի, խղճի համար ճնշող են: Իրա համար շատերն այսպիսի սլայմանական երդումի մէջ պետութեան համար ոչ մի ապահովութիւն չեն գտնում և աւելի նպատակաշարմար են համարում հոգևորականութիւնը բոլորովին ազատել այդ երդումից:

Գերմանական օրէնքը ընդունում է կաթոլիկ եկեղեցու իրաւունքը՝ կարգապահական պատիժներ դնել իւր անդամների վրայ—հոգևորականութեան և աշխարհականների. բայց աշխատում է, որ այս պատիժներն եկեղեցական շրջանից դուրս չգան և դոցա ենթարկւողների քաղաքական և քաղաքացիական իրաւունքներին չվերաբերեն: Ըստ Գերմանական օրէնքի, կաթոլիկ եկեղեցու կարգապահական իշխանութիւնը պէտք է տարածուի միայն նոցա վրայ, ով որ իսկապէս և ոչ անունով միայն պատկանում է եկեղեցական համախմբութեան. այսպէս օրինակ այդ իշխանութիւնը չպէտք է տարածուի այն բողոքականների վրայ, որոնց կաթոլիկ եկեղեցին ինք իրէն միայն իբր իւր տեսչութեան ենթարկուած է համարում: Եկեղեցական պատիժները պէտք է եկեղեցական բարիքների զրկումն լինեն և չպէտք է այդ եկեղեցու անդամի անձնաւորութեան, ազատութեան,



գոյքի և քաղաքացիական պատուին զիպչեն: Դոքա կարող են լինել՝ զրկանք եկեղեցական թամից, եկեղեցական մեծարանքից, բանադրանք, խսպառ որոշում. վերջինս միայն այն պայմանով, որ որոշեալի անունը չհրատարակուի կրօնական համայնքից դուրս, որովհետեւ հակառակ դէպքում այդ կըզրկէր որոշեալին քաղաքացիական համակեցութիւնից և այսպիսով դուրս կըգար եկեղեցական շրջանի սահմաններից: Ապա պետական օրէնքով արգելում է եկեղեցական իշխանութեանը պատիժ դնել այնպիսի գործողութիւնների համար, որ օրէնքն անպայման կերպով հրամայում է կատարել. օրինակ՝ ծառայողների պաշտօնական (ДОЛЖНОСТНЫЯ) գործողութիւնների համար, ընտրութեան ժամանակ ձայնից ազատօրէն օգտուելու համար և այլն: Պէտք է նկատել, որ օրէնքի պահանջը խսպառ որոշման ձևի նկատմամբ արդէն զիպչում է զգալի կերպով եկեղեցական կարգապահութեան:

Կղերականների վրայ գրուելիք եկեղեցական պատիժների նկատմամբ՝ Գերմանական օրէնքը նախ և առաջ որոշ կանոններով կարգաւորում է այն պատժի գործադրութիւնը, երբ մեղաւոր կղերականներին Գեմերիտների տան (մի ուղղիկ հաստատութիւն կղերի համար) մէջ են արգելում: Գերմանական մի քանի պետութեանց մէջ

(Պրուսիա, Հեսսէն) թոյլ է տրուում արգելել այդ ուղղիչ տները մէջ կղերականներին միայն սրանց համաձայնութեամբ, իսկ այլ պետութիւնների մէջ նոցա կամքի հակառակէլ: Այդպիսի արգելաններն չեն կարող Յ ամօից անցնել: Յամենայն դէպս պետութիւնը կաթոլիկ կղերականների համար եղած ուղղիչ հաստատութիւնների վրայ հսկողութիւն ունի: Հոգևոր գործոց մինիստրին հաղորդում են այս հաստատութիւնների ներքին կեանքի կանոններն ու կառավարիչների անունները: Ամեն տարուայ վերջը նրան հաղորդում է այն բոլոր անձանց անունները, որոնք արգելուել են այդ տարուայ ընթացքում այդտեղ, նոցա ընդունելու և արձակելու ժամանակները: Դրամական տուգանքի նկատմամբ ևս սահմանում է, որ նա չպէտք է անցնէ որոշ գումարից: Դատաստանի կարգի նկատմամբ որոշուած է. 1) Կղերականների վրայ կարգապահական պատիժներ պէտք է դնէ տեղական եկեղեցական իշխանութիւնը՝ և ոչ թէ արտասահմանեանը: 2) Ամենամեծ պատիժները (աստիճանից, պաշտօնից զրկելը, բռնի արգելում եկեղեցական ուղղիչ տան մէջ, եկեղեցուց որոշելը) չեն կարող ուրիշ կերպ տրուել, բայց եթէ գործը դատաւարական եղանակով քննելուց յետոյ, եթէ զրա հետ կապուած է ասրուստի միջոցների կրճատումը կամ զրկումը (Պրուսիա,

Հեստէն), իսկ մի քանի պետութիւնների մէջ (Վիւրտեմբերգ) այս պայմանը (գատաոտանական քննութիւնը) որոշուած է անել ամեն տեսակ հոգևոր պատիժների համար: Յ) Այն գործադրութիւնների համար, որ օրէնքը պարտաւորեցնում է իւրաքանչիւր ազնիւ քաղաքացու, չպէտք է դրուին կարգապահական պատիժներ: Գործեալ յատկապէս հարկաւոր է նկատել, որ հոգևորականները ոչ եկեղեցու մէջ, ոչ էլ ուրիշ տեղ իրանց պաշտոնը կատարելիս չպէտք է ժողովրդին քաղաքական գործերի մասին խօսեն այնպիսի ձևով, որ վրդովէն ժողովրդի միտքը: Նոքա չպէտք է նույնպէս հրատարակեն կամ տարածեն այդ տեսակ գրքեր կամ շարադրութիւններ:

Գերմանական պետութիւնները վանականների վրայ նայում են որպէս պապի գորքի վրայ, որ շատ օգնում է պապին պետութեան հետ վարած կռուի մէջ, իսկ վանքերը համարում են եզրուիտականութեան և պապականութեան տնկանոցներ: Գրա համար նոքա աշխատում են վանքերի թիւը փոքրացնել, ենթարկել դոյա քաղաքական հսկողութեան իսկ վնասակար վանական կարգերը (օրդէնները) բոլորովին փակել: 1872 թ. յունիսի 4 Գերմանական կայսերական օրէնքով արգելուած է եզրուիտների օրդէնը և նրան ուղղութեամբ նման կարգերը՝ ռեգեմպատօ-

րիտների, լազարիտների, ս. Հոգու քահանաների, Յիսուսի սրտի քոյրերի: Պրուսական 1875 թ. 31 մայիսի օրէնքը սկզբունքով մերժեց վանական բոլոր օրդէնների և միաբանութիւնների գոյութեան իրաւունքը. միայն ցնոր կարգադրութիւն թողեց այն օրդէնները, որոնց անդամներն իրանց նուիրում են միայն հիւանդների հոգատարութեան: 1880 թ. յուլիսի 14-ի օրէնքով այս կարգերին իրաւունք տրուեցաւ նոր վանքեր բանալ միայն մինիստրութեան թույլատուութեամբ: Բացի դրանից նույնպիսի իրաւունք տրուեցաւ առաջիններին նման այլ օրդէնների, որոնք իրենց գործունէութիւնը նուիրում են հիւանդների, կոյրերի, խուլերի, համրների, ապուշների և ընլած կանանց ֆիզիքական և բարոյական հոգատարութեան և ուսման: 1875 թ. 23 ապր. Հեստէնի օրէնքն արգելում է նոր կարգեր և վանքեր հիմնարկել կամ նոր անդամներ ընդունել արգէն գոյութիւն ունեցող վանքերի մէջ: Բացառութիւն է արած այն վանքերի հիմնարկման համար, որոնց անդամները հիւանդներին են նայում: Նոր անդամներ կարող են ընդունել կանանց միաբանութիւնները, որ զբաղում են տղայոց սովորեցնելով և սլահում են մասնաւոր դպրոցներ: Սակսոնիայում (1831 թ. 4 սեպ. 1876 թ. 23 օգոս.) արգելուած է նոր վանքեր հիմնել: Մնացած Գերմանական պետու-

Թեանց օրէնսդրութիւնների մէջ (Բաղէն, Բաւարիա, Վիւրտենբերգ) կառավարութեան այս պահանջներէց ամենափոքրն է պահանջուում. այն է՝ թոյլատուութիւն ստանալ կառավարութիւնից նոր կարգեր, միաբանութիւններ և նոր վանքեր հիմնելու համար: Բացի վանքերի բազմանալու ազատութիւնը սահմանափակելուց, Գերմանական պետութիւնները միջոցներ են ձեռք առնում և այն բանի համար, որ կրօնական ուխտ ընդունելը և կատարելը վանք մտնողի ազատ ինքնորոշումից բխէ: Այս տեսակէտից նոքա արգելում են ոչ միայն կրօնաւորութեան ուխտ ընդունելը, այլ և հասարակ կերպով վանք մտնելը 25 տարեկանից վաղ: Կառավարութիւնները հովանաւորում են վանականներին վանքից դուրս գալիս. այս տեսակէտից նոքա արգելում են վանական իշխանաւորներին պատժողական կամ ուղղիչ պահանջներ դնել վանքից դուրս գալ ցանկացողների վրայ: Այս նպատակով էլ նոքա արգելում են որ վանք մտնողները իրանց ստացուածքը նուիրեն յօգուտ օրդէնի, վանքի, կամ նրա կառավարութեան ու անդամներին: Յամենայն դէպս կրօնաւորութեան ուխտը պետութեան աչքում ոչ մի իրաւական նշանակութիւն չունի: Նոր պետութիւնը ուշք է դարձնում և վանական ներքին կարգ ու կանոնի վրայ: Այսպէս նա պահանջում է,

որ վանքերում օտարականեր չլինին, և վանքերը արտասահմանեան իշխանութեան չենթարկուին: Նոր պետութիւնը իւր պարտքն է համարում ժամանակ առ ժամանակ քննիչներ ուղարկել վանք՝ ներքին վանական կարգերը դիտելու: Վերջապէս ինչ վերաբերում է վանքերի գոյքի իրաւունակութեան՝ նոքա այս դէպքում նոյն օրինական սահմանափակումների են ենթարկւում, ինչ որ միւս եկեղեցական հաստատութիւնները: Այս օրէնսդրութիւնների զանցառման առաջն առնելու համար յատկապէս վանքերի նկատմամբ որոշուած է, որ ոչ մի իրաւական նշանակութիւն չպէտք է ունենան գոյքի այն կտակները յօգուտ օրդէնի, վանքերի, կամ նոցա իշխանութիւնների և առանձին անդամների, որ կատարուած կըլինին կողմնակի անձանց միջոցով:

Եկեղեցական գործերի ընթացքի վրայ պետութեան ունեցած հսկողութիւնը սովորաբար կենտրոնանում է հոգևոր գործոց կամ դաւանութեանց մինիստրութեան մէջ: Մեծ պետութիւնների մէջ, բացի բարձրագոյն օրգանից կայ կառավարութեան վերահսկողութեան և միջին օրգան, որ առհասարակ նահանգի օրբուպրեզիդենտն է լինում (Պրուսիայում և Բաւարիայում): Վիւրտենբերգում կաթոլիկ եկեղեցու գործերը քննում են յատուկ հաստատութեան մէջ՝ կաթո-

լիկ եկեղեցական խորհրդում, որ սակայն ենթարկուում է ոչ անմիջապէս գահին, այլ եկեղեցական գործերի և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան:

Բայց միայն հսկողութեամբ չի ապահովուի պետական օրէնքներով որոշուած կարգի կատարումը պետութեան և եկեղեցու յարաբերութիւնների նկատմամբ, երբ խօսքը կաթոլիկ եկեղեցու մասին է: Թէպէտ և կաթոլիկ եկեղեցին նոր պետութեան մէջ գործունէութեան աւելի մէծ ազատութիւն է վայելում, քան նախկին սիստէմի ժամանակ, բայց և այնպէս նա իւր գրութեամբ գոհ չէ, նոր պետութեան դէմ սկզբունքի ընդիմադրութիւն է ցոյց տալիս, որ ամեն ժամանակ կարող է իրկապէս շատ թէ քիչ տաք ընդհարման ձև ընդունել: Այս ընդհարումների և եկեղեցական իշխանաւորների կողմից՝ պետութեան դրած կարգի դէմ արած խանգարումների առաջն առնել նոր պետութիւնը չի կարող. նախազգուշական միջոցներ ձեռք առնելը նրա բանը չեն: Նա կարող է դիմել միայն պատժողական միջոցների իւր ապահովութեան համար: Այդ միջոցներն արդէն ձևակերպել են մի քանի Գերմանական պետութիւններ—Պրուսիա, Բադէն, Հեսսէն: Այս պետութիւնների օրէնքներով որոշուած են քրէական պատիժներ (գրամական տուգանք և բան-

դարկելութիւն) եկեղեցական իշխանաւորներին և առհասարակ հոգևորականներից գործած հետևեալ օրինազանցութիւնների համար՝ եկեղեցական կարգապահական պատիժներ դնելու նկատմամբ պետութեան օրէնքներով դրած սահմաններից դուրս գալու համար. եկեղեցական պաշտօն կամ աստիճան տալիս պետութեան օրէնքների պահանջ ներք չկատարելու համար. աստիճանի իրաւունքներից օգտուելու համար, չնայած որ այդ արգելել է պետութիւնը. օրէնքով արգելուած հոգևոր հաստատութիւնների ինքնակամ բացման համար. եկեղեցական կանոնադրութիւնների յայտարարման համար առանց միաժամանակ հաղորդելու այդ պետական աստիճանաւորներին՝ կամ այդ կանոնադրութիւնները առանց պետութեան համաձայնութեան գործադրելու համար քաղաքացիական և պետական յարակցութիւնների նկատմամբ (վերջինը Հեսսէնում): Բացի դրանից պետական իշխանութիւնը կարող է մեղաւոր հոգևորականին հրատարակել անընդունակ կատարելու իւր պարտականութիւնները: Այս պատիժը երբեմն մեղաւոր կղերիկոսի վրայ դրուած մի ուրիշ քրէական պատժի հետևանք է լինում. օրինակ ուղղիչ տներում արգելելու, պատուաւոր իրաւունքներից և արտօնութիւններից և հասարակական պաշտօնավարութիւնից զրկելու: Բայց պատժելու այս մի-



Չոցը կարող է գործ ածել կառավարութիւնը և անկախ քրէական օրէնքներով դատաւարտելուց, մանաւանդ այն հոգեւորականներին և իշխանաւորներին դէմ, որոնք յամառաբար մերժում են իրանց գործունէութեան վերաբերեալ պետական օրէնքների կատարելը և, օրէնքին ու բարձրագոյն իշխանութեան չհնազանդուելով, գալթակողութիւն են յառաջացնում հասարակութեան մէջ, ի վնաս պետութեան հեղինակաւորութեանը: Աերջերս օրինակ Պրուսական կառավարութիւնը գործ է ածում նաև դրամական տուգանք, մանաւանդ այն դէպքերում, երբ հարկաւոր է գրգել եպիսկոպոսներին կատարելու օրինական պահանջները. օրինակ՝ եկեղեցական պաշտօնեաներ նշանակելու, եկեղեցական գոյքերի կառավարման, եկեղեցու տեսչութեան տակ գտնւող կրթական և ուսումնական հաստատութիւնների նկատմամբ:

Կաթոլիկ եկեղեցու ունեցած պետական դիրքի վերաբերմամբ Գերմանիայում գործող նորմաները *de iure* (սկզբունքով) պարտադիր են և բողոքական եկեղեցու համար (Գերմանական օրէնքների խօսքով)՝ յանուն վաղուց արդէն Գերմանիայում ընդունուած — կաթոլիկ և բողոքական եկեղեցիների օրէնքի առաջ հաւասարութեան սկզբունքի: Բայց *de facto* (իրօք) այս նորմաները շատ քիչ են գործադրւում,

բողոքական եկեղեցու դէպի պետութիւնն ունեցած առանձնալատակ յարաբերութեան պատճառով, որ հաստատուել է ռեֆորմացիայի ժամանակից և մինչև այժմ մտած է եղել բողոքական եկեղեցու օրգանիկ (ներքին) կազմակերպութեան մէջ: Բողոքական եկեղեցին չի մերժում պետութեան այն իրաւունքը, որով նա կարող է եկեղեցու ունեցած դիրքը պետութեան մէջ կարգաւորել. այս դէպքում բողոքական եկեղեցու կողմից չէ կարելի սպասել պետութեան նորմաների դէմ որևէ ներգործական կամ կրաւորական հակառակութիւն: Դրա համար բողոքական հոգեւորականութեան նկատմամբ գործնական նշանակութիւն չունին այն նախազգուշական և պատժողական միջոցները, որ վերջին ժամանակ կազմակերպեցին գերմանական պետութիւնները հոգևոր իշխանութեանց օրէնքների չհնազանդուելու դէպքում գործածելու համար: Գործնական նշանակութիւն չունի բողոքական եկեղեցու նկատմամբ Գերման կառավարութիւնների եկեղեցական պաշտօններ և աստիճաններ տալու դէմ աւարկելու իրաւունքը, որովհետև բողոքականների հոգևոր պաշտօն ստանձնելը գտնւում է եկեղեցական-կառավարչական օրգանների ձեռքը, իսկ մի քանի դէպքերում կախուած է պետութեան գլխի հաստատումից: Նոյնն տեղի ունի

նաև եկեղեցական շրջանի պետականի հետ շփուելու միւս կէտերում: Ընդհանրապէս եկեղեցու և պետութեան բաժանման սկզբունքը որով եկեղեցուն ինքնօրինութիւն է տրուում նրա ներքին գործերի մէջ, անիրագործելի է բողոքական եկեղեցու պետութեան հետ սերտ, օրգանիկ միացման պատճառով, որի զորութեամբ պետութեան գլուխը եկեղեցու եպիսկոպոսն է, եկեղեցու գլուխը, օրէնադիրը և գլխաւոր կառավարիչը: Թէև բողոքական եկեղեցին ունի իւր զատաստանական և կառավարչական օրգանները, բայց եկեղեցական կառավարչական իշխանութիւնը բարձրագոյն ինստանցիայում կենտրոնացած է պետութեան գլխի ձեռքում. նոյն իսկ զատաստանական և կառավարչական օրգանները կազմակերպւում և կազմուում են պետական կենտրոնական կառավարութեան անմիջական ազդեցութեան տակ: Բողոքական եկեղեցու պետութեան հետ այսպիսի սերտ կապակցութեան շնորհիւ եկեղեցու և պետութեան բաժանման սկզբունքը մի ամբողջ օրգանիզմի քայքայում կ'առաջացնէր: Բողոքական եկեղեցին կուզենայ արդեօք բաժանուել պետութիւնից— դա ապանայի գործ է: Բայց բաժանումն անկարելի բան չէ: Բողոքական եկեղեցին չունի որոշ կազմակերպութիւն՝ դաւանաբանօրէն հաստատուած: Գոնէ մենք բողոքական եկեղեցու

մի օրինակ ունինք, որի գլուխը պետութեան գլուխը չէ, այդպէս է Հ. Ա. Մ. Նահանգներում: Համաձայն գործող օրէնքների, Գերմանիայում կաթոլիկութեան և բողոքականութեան ունեցած իրական վիճակի գննութիւնից երևում է, որ կաթոլիկ եկեղեցու ունեցած ինքնօրէն գիրքի սխտէմը պետութեան մէջ, որ իրան է վերապահում եկեղեցու նկատմամբ գերիշխանութիւնը, անհնարին չի դարձնում, որ գործնականում նոցա մէջ բազմազան յարաբերութիւններ լինեն, և որ առհասարակ արտոնեալ կրօնական հանրային ընկերակցութիւնների գիրքն այն չէ, ինչ որ պահանջում է բոլոր դաւանութիւնների մէջ ազատութեան և հաւասարութեան սկզբունքի հետևողական ներմուծումը: Ինչ վերաբերում է երրորդ սկզբունքին, որով բնորոշւում է նոր պետութեան վերաբերմունքը դէպի կրօնը— քաղաքացիական և պետական յարակցութիւնները կրօնի ազդեցութիւնից ազատելու սկզբունքը— պէտք է ասել, որ այս ևս Գերմանիայում իրագործուել է լողուտ հին սխտէմի մի քանի նշանաւոր շեղումներով: Այդ շեղումները մնացել են պետական յարակցութեանց շրջանում: Հին սխտէմի այդ մնացորդների թուին պատկանում են եկեղեցական օրացոյցն ընդունւում է պետական իշխանութեան կողմից, պետութիւնը պահանջում է,

որ կրօնական ընկերակցութիւնները պետութեան բարեկեցութեան և պետական իշխանութեան ներկայացուցիչները բարօրութեան համար ազօթեան. պահանջուած է պետութեան հաւտարիմ մնալու երգում, երբ որևէ հոգևորական աստիճան կամ պաշտօն է ստանձնում. եկեղեցական պաշտօնեաներ նշանակելու վերաբերմամբ պարօնատի իրաւունքի պաշտպանութիւն դատաստանի կողմից. քաղաքացիական դատաստանների աջակցութիւնը ծխական տուրքերի ճիշտ հաւաքման համար՝ տասանորդի, եկեղեցական շինութիւնները պահելու գումարի և հոգևորականութեան ապրուստի համար եղած վճարքների. պետական իշխանաւորները վարչական աջակցութիւն են տալիս եկեղեցական իշխանութեան հրատարակած կանոնների և դատաստանական վճիռների կատարմանը. պետութիւնից ուռճիկ և պէսսիա բողոքական եկեղեցու աստիճանաւորներին, համաձայն ընդհանուր հիման, նման պէ տական աստիճանաւորներին և այլն:

Եկեղեցական գործոց մասին եղած Աւստրիական օրէնսդրութեան մէջ նույնպէս իւրացրած են եկեղեցական գործերի վերաբերեալ բոլոր կարևորագոյն կանոնադրութիւնները, որ վերջին 20—30 տարում հրատարակուած են Քերմանիայում: Միայն մի բանի մէջ է յետ մնացել Աւստրիան Քերմանիայից—նա չէ վստահել

պետութեան եկեղեցուց կատարեալ բաժանումը բացէ ի բաց հռչակել: Աւստրիական 1867 թ. օրգանական օրէնքով, նույնպէս և 1868 թ. 3 օրէնքներով, որոնք վերաբերում են ամուսնութեան, դպրոցներին և զանազան դաւանութեանց փոխադարձ յարաբերութիւններին, քաղաքացիական և պետական յարակցութիւնների շրջանը կրօնի ազդեցութիւնից ազատուած է: Կաթոլիկ եկեղեցուն իւր ներքին գործերի մէջ ինքնօրինութիւն է տրուած՝ ազատութիւն վարդապետութեան և աստուածապաշտութեան, կանոնաւորութեան և իւր շքերջանվ մէջ իրաւասութեան\*) . ազատութիւն եկեղեցական դպրոցներ բանալու հոգևորականների և առհասարակ նրանց մէջ սովորել բոլոր ցանկացողների համար նույնպէս և պետական դպրոցներում կրօնի դասատուութեան գործն իրան վրայ առնելու իրաւունք. ազատութիւն կրօնական ընկերակցութիւններ կազմելու բարեպաշտ գործունէութեան, քրիստոնէական ուսման տարածման, բարեգործութեան... համար. ազատութիւն եկեղեցական գոյքերի կառավարման համար: Սակայն կաթոլիկ եկեղեցու այս ինքնօրինութիւնն անպայման բնաւորութիւն չունի. իրօք որոշ սահման կայ, որ որոշել է պետութիւնը իւր և հասարակաց շահերը պահպանելու համար: Պետութիւնն իւր

\*) Юрисдикция,

իրաւունքն ու պարտք է համարուժ հսկել, որ պաշտամունքի և վարդապետութեան ազատութիւնը չծառայէ իբրև ծածկոյթ հակապետական ձգտումների և որ եկեղեցու իրաւասութիւնը դուրս չգայ եկեղեցական յարակցութեանց շրջանից և բացի գուտ եկեղեցական միջոցներից՝ ուրիշ միջոցի չգիմէ և ուղղած չլինի պետական օրինաց դէմ: Եկեղեցական աստիճան կամ պաշտօն ստանձնողը պետութեան պահանջով պէտք է լինի իւր հպատակներից և ազատ բարոյական և քաղաքական որևէ արատից: Եպիսկոպոսներին պաշտօնի նշանակելու նկատմամբ պետութիւնը ունի առաջնայ նման կոչելու իրաւունք (право номинации): Ինքնակախ հովուական գործունէութեան վերաբերեալ պաշտօնների նկատմամբ և այն դէպքերում, երբ ծխական քահանան պաշտօն է ստանձնում այն ծխերում, ուր ապրուստի համար պետական գանձարանից է փող տրուում և որոնց վերաբերմամբ գոյութիւն ունի թագաւորի պատրոնատի իրաւունքը \*)—եկեղեցական իշխանութիւնը բանակցութեան մէջ է մտնում պետական հետ. վերջինս այս գործին մասնակցում է նրանով, որ ընտրուածին յանձնում է իրաւունք այն եկամուտների վրայ, որ յատկացրած են այդ պաշտօնին: Եկեղեցական պաշտօններ ստանձնելու միւս բոլոր դէպքերում

\*) Право патронатства.

պահանջում է ստանձնողի մասին նախապէս ծանուցանել աշխարհական կառավարութեան, որ 30 օրուայ ընթացքում կարող է իւր առարկութիւնները ներկայացնել եկեղեցական իշխանութիւնից նշանակուած կանդիդատների իրաւունակութեան դէմ, եթէ բաւականաչափ հիմքեր ունի դրա համար. բայց միևնոյն ժամանակ հոգևոր իշխանութեանը իրաւունք է տրուում բողոքելու այդ մասին հոգևոր գործոց մինխտրութեան: Հիմնաւոր առարկման հակառակ որևէ պաշտօնի նշանակելն անվաւեր է: Թեմեր, ծխեր հիմնելու և կամ ընդհանրապէս եկեղեցու արդէն գոյութիւն ունեցող ծխերի և դիէցեզների մէջ մի փոփոխութիւն մտցնելու հարկաւոր դէպքում պահանջում է կառավարութեան համաձայնութիւնը: Եթէ հոգևորականը մեղաւոր ճանաչուի բարոյականութեան, հասարակական կարգի գանցաւման կամ շահասիրութեան մէջ, կառավարութիւնը կարող է եկեղեցական իշխանութիւնից պահանջել պաշտօնից հեռացնել մեղաւորին, և եթէ եկեղեցական իշխանութեան կողմից պահանջը չչարգուի, նրա տեղը թափուր կարող է յայտարարել: Եպիսկոպոսի կարգադրութիւնները կարող են յայտարարուել ի գիտութիւն բոլորի առանց կառավարութեան հաստատման, բայց յայտարարման հետ միաժամանակ ի գիտութիւն հաղորդւում են աշխարհական իշխանութեան:



Կառավարութիւնը աջակցում է եկեղեցական տուրքեր ժողովելուն, որոնք գրւում են կառավարութեան համաձայնութեամբ: Կառավարութիւնն օգնում է նոյնպէս եկեղեցական իշխանութեանը նրա վճիռները ի կատար ածելու մէջ, որք վերաբերում են հոգևորականներին պաշտօնից հեռացնելուն, եթէ այդ վճիռները արդար է գտնում: Կառավարութեան իրաւունքն է վանական կարգերի հիմնարկման վերահսկողութիւնը: Ոչ մի նոր օրդէն (կարգ) չի կարող հիմնարկուել առանց կառավարութեան համաձայնութեան: Թոյլատրութիւնը լետ կառնուի, եթէ կարգը քանդէ այն պայմանները, որոնց հետ կապուած էր նրա թոյլատրութիւնը, կամ եթէ նրա անդամների մասին մի քանի անգամ կրնկատուի, որ դոցա վարքը հասարակական կարգի համար վտանգաւոր է: Օրէնքի աչքում կրօնաւորութեան ուխտերը ոչ մի պարտադիր նշանակութիւն չունին: Վանական միաբանութեան իւրաքանչիւր անգամ ուզած ժամանակ կարող է թողնել և հեռանալ: Հեռանալուց լետոյ նա իրաւունք ունի ստանալ իւր այն ունեցուածքը, որ մտնելիս նուիրել էր վանքին: Յօդուտ վանքի եղած կտակներն ու նուէրները, եթէ իրանց արժողութեամբ անցնում են 3000 Ֆլորինից, օրինական զօրութիւն կարող են ստանալ միայն կառավարութեան համաձայնու-

թեամբ: Վանական գոյքերի կառավարութիւնը պետութեան մշտական հսկողութեան է ենթարկում:

Այստեղ համառօտ մէջ բերած օրէնսդրութեամբ աւստրիական կառավարութիւնը քանդեց պապի հետ 1855 թ. օգոս. 18 կապած կոնկոդատը: Պապը չէր ուզում ճանաչել աւստրիական իշխանութեան միակողմանի իրաւունքը — ըստ իւր հայեցողութեան կարգաւորել կաթոլիկ եկեղեցու պետական դիրքը և աւստրիական եպիսկոպոսներին ուղղած 1874 թ. մարտի 4-ի էնցիկլիկի մէջ անպայման կերպով պախարակեց աւստրիական օրէնսդրութիւնը: Աւստրիոյ կայսրը պատասխանեց այս էնցիկլիկին, թէ ինքը չէ կարող մինիստրութեան ընդունած օրէնքները չհաստատել, իսկ կոմս Անդրաշին ցաւակութիւն յայտնեց, որ պապը դատողութիւն է տալիս այնպիսի խնդիրների մասին, որոնք չեն վերաբերում ոչ զոգմաներին, ոչ եկեղեցական կարգապահութեան, և բացառապէս ենթարկում են պետութեան, իրաւասութեան (компетенция): Ինչ վերաբերում է աւստրիական եպիսկոպոսներին, նոքա շուտով հաշտուեցան նոր օրէնքների հետ: Աւստրիական կառավարութեան յաջողութիւնը, որ նա ձեռք բերաւ եկեղեցական գործերի վերաբերեալ արած օրէնսդրութեամբ, գլխաւորապէս այն է, որ նա իրօք օգտուեցաւ իւր

իրաւունքից եկեղեցու դիրքը պետութեան մէջ ինքնակախ որոշելու:

Փրանսիայում, չնայած նրա քաղաքական և սոցիալական բազմաթիւ լեղաշրջումներին, եկեղեցու և պետութեան միջի յարաբերութիւնն առաջուանն է մնում: Նապոլէօնից յետոյ ռեստաւրացիայի ժամանակ ֆրանսիական կառավարութիւնը պետական կրօն յայտարարեց կաթոլիկութիւնը: 1830 թ. յուլիսեան լեղափոխութիւնից յետոյ կաթոլիկութիւնը ֆրանսիացիների մեծամասնութեան կրօն կոչուեցաւ: 1848 թ. նոյեմ. 4-ի օրէնքի մէջ դաւանութեան կատարեալ ազատութիւն է խոստացւում և օրէնքի կողմից բոլոր դաւանութիւններին միատեսակ հովանաւորութիւն, իսկ ճանաչուած գաւանութեան հոգևարականութիւնն իրաւունք ունի ստանալ պետութիւնից ապրուստ: Գաւանանքի օրէնքի բնագիրը այսպէս փոփոխուելով ու ուղղուելով՝ գործի էութիւնը չփոխուեց: Կաթոլիկութիւնը մինչև այժմ էլ Փրանսիայում մնում է պետական կրօն: Նոյնն եղաւ և Նապոլէօն I հրատարակած «օրգանիկ յօդուածների» նկատմամբ, որ վերաբերում էր պետութեան և եկեղեցու յարաբերութիւններին: Գոքա յաճախ գործնական կեանքի մէջ մոռացւում էին, բայց մինչև այժմ էլ իրաւական գորութիւնը պահել են: Այս «յօդուածների» համաձայն ֆրանսիա-

կան կառավարութիւնը վայելում է ընդարձակ իրաւունքներ եկեղեցու կառավարման և եկեղեցական գործերի վերաբերմամբ, այն հոգով, որ տիրում էր առաջ պետութեան՝ եկեղեցու վերայ խնամակալութեան նախկին սիստէմի ժամանակ: Կառավարութիւնն իրաւունք ունի յայտնել իւր place-ը պապի կարգադրութիւնների և արտասահմանեան ժողովների կանոնադրութիւնների վերաբերմամբ: Առանց կառավարութեան թոյլատուութեան չեն կարող հաստատուել նոր թեմեր, ծխեր, կամ ծխերի և դիէցեզների բաժանման մէջ չեն կարող փոփոխութիւններ լինել, ինչպէս և եկեղեցական պաշտօնների շտապի մէջ: Գլխաւոր վիկարիները, կանոնիկոսները, ծխական քահանաները նշանակոււմ ու արձակոււմ են կառավարութեան հաստատութեամբ: Եպիսկոպոսներ նշանակոււմ է պապը բանակցելով կառավարութեան հետ: Այժ ունի նաև հին օրէնքը, որ թոյլ է տալիս բողոքներ ներկայացնել Աետական Խորհրդարանին հոգևոր իշխանաւորների անկանոն գործերի համար, պետական օրէնքները չկատարելու, կարգապահական իրաւունքն ի չար գործ գնելու համար և այլն: Բողոքել կարող է նաև մասնաւոր մարդ, որ առանձնապէս զրկանք է կրում հոգևոր իշխանութեան անկանոն գործողութիւններից: Գործը կարող է սկսուել և աշխարհա-

կան իշխանութեան կողմից, մանաւանդ այն ժամանակ, երբ հողերը իշխանութեան անկանոն գործերից վնաս են կրում պետական իշխանութեան վարկը կամ ընդհանուրի շահերը: Կառավարնութիւնը պահանջում է, որ սեղանի սպասաւորները աղօթեն պետութեան բարեկեցութեան և բարօրութեան համար: Հոգևորականները պաշտօն ստանձնելիս հաւատարմութեան երդում են անում պետութեան հաւատարիմ մնալու և պետական օրէնքներին հնազանդ լինելու համար: Վերջին հանրապետութիւնից \*) սկսած Փրանսիայում ծագեց արմատականների և պապականների մէջ մի կռիւ, որ գլխաւորապէս կենդրոնացած է երկու կէտի շուրջը—ժողովրդի ուսման և վանական կարգերի:

Մենք ծանօթացանք այն ընդհանուր սկզբունքներին, որոնք բնորոշում են նոր պետութիւնը նրա գէպի կրօնն ունեցած յարաբերութեան կողմից, և այդ սկզբունքների գործադրութեանը և Արևմտեան Ներուպայի Հիւսիսային Ամերիկայի զանազան պետութիւնների կեանքում: Մեզ մնում է տակաւին, հարցը լաւ պարզաբանելու համար՝ հաշիւ տալ, թէ որտեղից է յառաջացել պետութեան և եկեղեցու յարաբերութեան այս սխտէմը, ինչ արժանաւորութիւն ունին այս սխտէմի սկզբունքները

\*) Республика.

և թէ ապագայում դա ինչ է խոստանում եկեղեցու համար:

Պետութեան և եկեղեցու յարաբերութեան այն սխտէմը, որի մասին է մեր խօսքը, իւր ծագումով տեղական երևոյթի բնաւորութիւն ունի: Ամերիկայում, ուր նա առաջին անգամ գործադրուեց, նա յառաջացել էր ոչ թէ տեսական դատողութիւններից այլ գործնական կարիքից, քաղաքական հանգամանքների բարդուելուց: Ներուպական առաջին գաղթականները չգիտէին Ամերիկայում խղճի և դաւանութեան ազատութիւն: Թէպէտև իրանք Ներուպայից Ամերիկա էին փախչում կրօնական հալածանքներից սակայն, բնակութեան նոր տեղում նոքա յայտնի էին նոյն այն անհանգուրժողութեամբ, որից հէնց իրանք տուժել էին Ներուպայում: Գաղթականութեան շրջանի ամբողջ ընթացքում տիրում էր կրօնական անհանգուրժողութեան ոգին համարեա բոլոր գաղութներում սակաւ բացառութեամբ: Գաղութներից իւրաքանչիւրն ունէր իւր սահմանած պետական կրօնը, որ պարտադիր էր գաղութի բոլոր անդամների համար առանց բացառութեան և թուլացման: Որովհետև ազգաբնակութեան մեծամասնութիւնը բողոքականներ էին, դրա համար բողոքականութիւնը Հ. Ա. Նահանգների սահմանած կրօնը դարձաւ: Իսկ կաթոլիկութիւնը, ինչպէս

փոքրամասնութեան կրօն, արգելուած և հալածական դարձաւ: Թէ որ աստիճան բողոքականութիւնը անհանդուրժող էր կաթոլիկութեան վերաբերմամբ, այդ երևում է այն փաստից, որ բողոքականները չէին կարող անտարբեր տեսնել նոյն իսկ իրանց քաղութների սահմաններից դուրս՝ օրինակ Կանադայում, կաթոլիկների դաւանութեան ազատութեան իրաւունքը: Երբ 1774 թ. անգլիական կառավարութիւնը Կանադայի կաթոլիկներին դաւանութեան ազատութիւն տուաւ, Ամերիկայի բողոքականները սաստիկ կատաղեցան: Նոքա այս փաստի մէջ տեսնում էին բողոքական կրօնի և Ամերիկայի ազատութեան համար մի մեծ վտանգ և Ն. Ա. Նահանգների կոնգրէսի անունից բողոք լայանեցին անգլիական կառավարութեան և ժողովրդին: Բայց ահա հէնց հետեւեալ տարին բորբոքուեցաւ ամերիկացոց ազատութեան պատերազմը մայր երկրի (Անգլիայի) հետ և այս կռիւր ամերիկացոց մէջ կրօնի հանդուրժողութիւն լաւաջացրեց: Ամերիկացիք հասկացան, որ առաջիկայ պատերազմը իրանցից կը պահանջէ բարոյական և ֆիզիքական բոլոր ոյժերի ամենախիստ լարում, որ պատերազմի լաջողութեան համար հարկաւոր է սերտ կերպով միանալ իրար հետ և մոռանալ կրօնի համար ունեցած հին հաշիւները: Մարեւանդում, ուր կաթոլիկների հա-

լածանքը առանձնապէս խիստ էր եղել, ժողովը յօրինեց ժողովրդին ուղղուած հետեւեալ կոչը. «Որովհետեւ մեր դիմագրութիւնը անգլիական կառավարութեան այն ծրագրին, որով նա կամենում էր ստրկական հպատակութեան մէջ դնել Ամերիկան, կարող է այս նահանգի ամեն դասակարգի մարդկանց կապով զօրանալ, ուստի մենք ամենալուրջ կերպով առաջարկում ենք, քաղաքականութեան և կրօնի, որ առաջուայ բոլոր տարբերութիւնները և ամեն տեսակ մասնաւոր վէճերն ու թշնամութիւններն այժմուանից ընդ միշտ վերջանան և մոռացութեան մէջ թաղուին»: Այս առաջին ձայնն էր լօգուտ Ամերիկայի ընդհանուր կրօնական ազատութեան: Ապա կառավարութիւնն անհրաժեշտ համարեց կռուի լաջողութեան համար իւր կողմը ձգել և Կանադան, և խոստացաւ նրա վերաբերմամբ ևս ճանաչել դաւանութեան կատարեալ ազատութիւն: Փորձը լաջողութիւն չունեցաւ և ամերիկացիք գէպի կանադացիք ցոյց տուած իրանց անհանդուրժողութեան համար դառն դաս ստացան: Սակայն այս դասը առանց օգտի չանցաւ նոցա համար: Հետեւեալ 1776 թ. Նահանգների մասնական ժողովներում նոր սահմանադրութիւններ մշակելիս՝ նոքա օգտուէտ համարեցին նոր ծագող պետութեան օրգանիզմն ամբայնել հեռացնելով նրանից երկ-

պառակութեան տարրերը և ի միջի այլոց կրօնական անհանգուրժողութեան արմատը, և զրա համար որոշեցին ազատել պետութիւնը եկեղեցական հարցերին միջամիտելուց, յանձնելով կրօնը անհատական ազատութեան: Նոյն հարցին նոր բնթացք տրուեցաւ Հ. Ա. Նահանգների 1787 թ. Գաշնակցական ժողովում, որ գումարուեց Նահանգների բնդհանուր սահմանադրութիւնը յօրինելու: Ժողովի անդամների շարքում կային նաև կաթոլիկներ, որոնց 'չէին տալիս քաղաքական իրաւունքներ Նահանգներից միքանիսում: Այսպիսով ծագեց կաթոլիկներին՝ Գաշնակցական ժողովի խորհրդակցութիւններին մասնակցելու իրաւունակութեան հարցը: Գրաբացասական լուծումը իհարկէ գաշնակցական պետութեան\*) անգամների մէջ երկպառակութիւն կը ձգէր: Երկպառակութիւններից խուսափելու համար ժողովը որոշեց. «Միացեալ Նահանգների մէջ հասարակաց վստահութիւն վայելելու կամ որևէ պաշտօն ստանձնելու համար հարկաւոր չէ պահանջել ոչ մի կրօնական վիպական՝ որպէս իրաւունակութեան որոշիչ»: Ապա 1791 թ. մասնական Նահանգների ժողովների յայտարարութեան հիման վրայ, սահմանադրութեան մէջ աւելացրին պետութեան՝ եկեղեցուց կատարելաբաժանման կէտը. «Կոնգրէսը կրօն հաստատե-

\*) Союзное государство.

լու կամ նրա ազատ կատարումը արգելելու մասին ոչ մի օրէնք չպէտք է հրատարակէ»: Ահա այս են այն հանգամանքները, որոնք ստիպեցին Հ. Ա. Նահանգներին հռչակել զաւտնութեան ազատութիւն և պետութեան բաժանում կրօնից: Այդ հանգամանքները զուտ քաղաքական և տեղական բնաւորութիւն ունեն:

Եկեղեցու և պետութեան յարաբերութեան նոր սխաէմը Եւրոպայում արգիւնք է կաթոլիկ եկեղեցու և պետութեան մէջ եղած բազմադրեան կռուի, որ մղուել է պետական իրաւունքի \*) հողի վրայ: Գեո. XIV գարից սխաժ արեւմտեան Եւրոպայի պետութիւնն լետ էր դարձրել իւր անկախութիւնն իւր ներքին գործերի համար: Աերանորոգութեան ժամանակից նա իւրացրեց իրան նոյնիսկ եկեղեցու վրայ խնամակալելու իրաւունքը և բնդարձակ իրաւագօրութիւններ \*\*) եկեղեցու ներքին գործերի նկատմամբ: Իրերի այսպիսի դրութիւնը տեղին էր, մինչև որ պետութիւնը պահում էր իւր բացարձակ բնաւորութիւնը: Պետական ազատ հաստատութիւնների հետևողական ծագմամբ՝ եկեղեցու վրայ պետութեան խնամակալութեան սխաէմը ճնշող թուեցաւ: Գրա հետ միասին զաւտնութեան և խղճի ազատութեան

\*) Государственное право.

\*\*) Полномочіе.

վարդապետութիւնը սկսեց ճանապարհ բանալ իւր համար: Աեանքի մէջ այս վարդապետութիւնը մտցնելու հետեանքն եղաւ պետութեան կատարելագէտ բաժանումը եկեղեցուց: Պետութիւններն յոժարութեամբ ընդունեցին այդ սխտէմը, յուսալով նրա մէջ գտնել մի նոր և աւելի լաւ միջոց պապի՝ իրանց գործունէութեան շրջանի մէջ միջամտելու դէմ: Եկեղեցու և պետութեան միութեան հին սխտէմը չէր փրկուած պետութեանը նրա գործերի մէջ պապի միջամտելուց կամ գտնէ պապի մշտական ոտնձգութիւններից, չնայելով որ պետութիւնը իւր գործերի մէջ գերիշխանութիւն ունէր: Այժմ եկեղեցուց բաժանուելով, պետութիւնն յոյս ունի իւր գործերի մէջ հանդիստ գտնել: Այս սխտէմը արեւմտեան Եւրոպայի օրէնագրութիւնների մէջ ներմուծելուն առանձնապէս զօրեղ զարկ տուաւ 1870 թ. Վատիկանի ժողովը՝ պապի կարգադրութիւններն անսխալ հրատարակելով, և 1864 թ. պապի էնցիկլիկան՝ իրեն կից «գարուս մոլորութիւնների ցանկով», ուր նա գատապարտում էր արդի արեւմտեան քաղաքականութիւնը բնորոշող բոլոր գաղափարներն ու սկզբունքները: Պապականութեան այս ձեռնարկութիւնների մէջ արեւմտեան Եւրոպայի ազգերը կռուի մի նոր քաջ տեսան նոր պետութեան դէմ, հասարակաց կեանքի ազատութիւնը ճնշե-

լու մի նոր, չլուսած փորձ: Արեւմտեան Եւրոպայի պետութիւնները, որպէս զի պապի նոր կանոնադրութիւնների հետեանքներից պաշտպանեն հասարակաց կեանքը, իրար չետեից ներմուծեցին այնպիսի օրէնքներ, որոնք նպատակ ունին մասնաւոր իրաւական և հասարակական յարակցութիւններն ազատել կրօնական հաստատութիւնների հետ իրաւական որևէ հաղորդութիւնից: Այսպիսով Եւրոպայում պետութեան եկեղեցուց բաժանելու սխտէմը՝ Ամերիկայի հետ համեմատած ունի իւր ծագման յատուկ պատճառը: Այստեղ ևս նա տեղական բնաւորութիւն ունեցող մի երևույթ է, որ յառաջ է գալիս տեղական պատմական հանգամանքներից:

Պետութիւնը եկեղեցուց բաժանելու սխտէմը, իբրև տեղական բնաւորութեան մի երևույթ, պարզ է, որ անպայման նշանակութեան յաւակնութիւն չի կարող ունենալ: Եւ այնտեղ էլ՝ ուր որ այս սխտէմը ծագում է, նա գործադրում է, ինչպէս տեսանք, այն չափով, ինչ չափով որ այդ հարկաւոր է լինում՝ նաչած տեղական պայմաններին: Իսկ այնտեղ, ուր չկան նրա գործադրութեանը նպաստող պայմաններ, նա իհարկէ տեղ պէտք է չունենայ: Հէնց այսպէս են նաչում այս սխտէմի գործնական նշանակութեան վրայ իրանց լրջութեամբ նշանաւոր մտածողները և քաղաքականութիւնն ու

իրաւունքն ուսումնասիրողները (Հինշիուս, Բլիւնչի): Հինշիուսի կարծիքով, օրինակ, կորիք չկալ ամենեին պետութեան՝ եկեղեցուց բաժանուելու սկզբունքը կեանքի մէջ մտցնել իւր բոլոր արամաբանական հետեւողութեամբ նոյն իսկ այն ժամանակ, երբ չկան այդ միջոցը պահանջող գործնական պայմաններ, Այսպէս օրինակ, ուր որ հնուց պետութեան և մի յայտնի դաւանութեան մէջ գոյութիւն ունին սրտ բարեկամական յարաբերութիւններ, կամ ուր որ կալ միայն մի կամ համարեւ մի դաւանութիւն բացարձակ դիրք ունեցող, այնտեղ իհարկէ չիշեալ սկզբունքը կեանքի մէջ մտցնելու իրական պայմաններ չկան, այդտեղ նոր կարգերի աւելորդ ներմուծումով կարող են խախտուել առաջուայ հասարակական յարաբերութիւնները, որ մինչև այդ ժամանակ բարեբաստիկ և փրկարար էին հանդիսանում: Մի և նոյն ժամանակ, օրինակ, ընդանուր գերեզմանատների ստիպողական ներմուծումն այնպիսի պետութիւնների մէջ կամ տեղերում, ուր քիչ կան կամ բոլորովին չկան ալլահաւատներ, մի բոլորովին անմիտ բան կըլինէր: Նոյնպէս և ոչդաւանական դպրոցների ներմուծումը այն տեղերում, ուր իշխում է միայն մի դաւանութիւն, կամ եկեղեցու և ժողովրդական դպրոցի մէջ գոյութիւն ունեցող պատմական կապը խանգարելը այնպիսի միջոց-

ներ են, որոնցով պետութիւնը միայն իրան կըմնասէ: Ընդհանրապէս Հինշիուսի կարծիքով պետութիւնը չպէտք է անպատճառ անտարբեր լինի իւր մէջ գտնուող կրօնական ընկերակցութիւնների վերաբերմամբ: Պաւանութեան ազատութեան սկզբունքին չդաւաճանելով, պետութիւնը կարող է այդ համախմբութիւններից մէկին միւս գաւանութիւնների նկատմամբ բոլորովին լուրիշ դիրք տալ, ինչպէս օրինակ այդ անում է Պերմանական պետութիւնը բողոքականութեան և կաթոլիկութեան վերաբերմամբ: Նոյն ուղղութեամբ, բայց աւելի ազատ է դատում միւս նշանաւոր իրաւաբանը — Բլիւնչին պետութեան և եկեղեցու նկատմամբ նոր սկզբունքների գործադրութեան մասին: Նրա կարծիքով պետութիւնը չի կարող անտարբեր լինել իւր մէջ գտնուած դաւանական համախմբութիւնների վերաբերմամբ այն հիման վրայ, ինչ հիման վրայ որ ինքը չի կարող անկրօն լինել: Կրօնական համախմբութիւններից ոմանք պետութեան կողմից ճանաչուած պէտք է լինեն, իսկ այլք՝ լակ տանելի: Ճանաչուած կարող են լինել այն համախմբութիւնները, որոնք պետութեան կողմից առանձին ուշադրութեան են արժանանում իրանց պատմական իրաւունքների և պետութեան պատմութեան նկատմամբ ունեցած նշանակութեան համար, և որոնք վա-

յերում են պետութեան յատուկ վստահութիւնը, իբրև այնպիսի համախմբութիւններ, որոնք բարեբար սոցիեցութիւն ունեն ժողովրդի համոզմունքների և բարքերի վրայ: Պետութիւնն այնպիսի համախմբութիւններին կարող է առանձին յարգանքով և պատուով վերաբերուել, հրաւիրել նոցա հասարակական գործերին մասնակցելու, օրինակ՝ ժողովրդի ուսման գործին, հասարակական բարեգործութեան և այլն, այս պատճառով կարող է օգնել նրանց իւր նիւթական միջոցներով: Պետութեան մէջ, բնա նորա հայեցողութեան, այնպիսի դիրք կարող են վայելել թէ մի և թէ մի քանի դաւանութիւններ: Սոցա ընտրելը և դատելը միւս կրօնական համայնքներից կախուած է թէ տեղական հանգամանքներից և պատմական պայմաններից և թէ այդ կրօնական համախմբութիւնների որպիսութիւնից՝ և պետութեան գործն է: Բլիւչլին՝ պետութիւնից ճանաչուած եկեղեցին կոչում է Landeskirche — երկրի եկեղեցի, մեծամասնութեան եկեղեցի: Ըստ Բլիւնչլի սորա գանազանութիւնը պետական կրօնից խիստ մտքով այն է, որ սա պետութիւնից անկախ է համարոււմ և նոյնպէս պետութիւնն այս դէպքում ազատ է մնում դաւանական բնաւորութիւնից: Եթէ որևէ կրօնական համախմբութեան բնաւորութիւնը զուրկ է բարոյական աւհաւատչեայից և անբարեկարգ

է, պետութիւնն իրաւունք ունի դրան ճանաչուած կրօնական համախմբութիւններից կամ եկեղեցիներից ստոր դասել և համարել լոկ տանելի մի ազանդ: Տանելիութեան սահմանները կախուած են պետութիւնից: Յամենայն դէպս պետութիւնն իրաւունք ունի արգելել որոշ ազանդ, եթէ նրա մէջ նկատոււմ է հակաբարոյական և հակահասարակական ձգտումներ և գործողութիւններ: Տանելիութեան նոյնպիսի յարաբերութիւն պատշաճ է պետութեան կողմից և ոչքրիստոնէական կրօնների վերաբերմամբ: Եւրոպայի քրիստոնեայ պետութիւնից պահանջել, որ նա նոյն սիրով և բարեհաճութեամբ վերաբերի ոչքրիստոնէական կրօններին, ինչպէս որ նա վերաբերոււմ է քրիստոնէական եկեղեցիներին, — անբնական է, ասում է Բլիւնչլին՝ և պատշաճ միայն այն ժամանակ, երբ պետութիւնը կրօնին անտարբեր վերաբերուելու սուտ սխառմին է հետեւում: — Նոյն իսկ ճանաչուած եկեղեցիների միջից պետութիւնը կարող է ընտրել մէկը և շնորհել նրան յատուկ արտօնութիւններ համեմատած միւսների հետ: Այս ընտրեալը վայելում է պետութեան կողմից առանձին հովանաւորութիւն (jus advocatiae) իւր գործունէութեան մէջ, օրինակ աստուածապաշտութեան կատարման մէջ: Պետութիւնը ոչ միայն պահպանում է արտօնեալ եկեղեցու հասարակական



աստուածալաշտութեան խաղաղութիւնն ու կարգը, այլ և եկեղեցական տօներին պետական նշանակութիւն է տալիս, այդ օրերն աստիճանաւորներին պաշտօնաթող անելով, արգելելով առևտուրը և այլն: Պետութիւնն շարժանք է ցոյց տալիս արտօնեալ եկեղեցուն \*) նրանով, որ հրաւիրում է նրա առաջնորդներին մասնակցել քաղաքացիական հանդէսներին և այդպիսի դէպքերում հայցել Աստուծոյ օրհնութիւնը պետութեան և նրա իշխանութեան ներկայացուցիչների վրայ: Պետութիւնը հոգ է տանում արտօնեալ եկեղեցու նիւթական կարիքների, տաճարներ շինելու և բարեգարգելու, հոգեւորականութեան ապրուստի, եկեղեցական դպրոցների, միսսիանների (առաքելութիւնների)... համար: Արտօնեալ եկեղեցու քահանայազորձող զասը վայելում է պետական աստիճանաւորների արտօնութիւնները, մասնակցում է կարևոր հասարակական գործերին: — Եկեղեցապետական շարքերութիւնների նոր սիստէմի պահանջները իրագործելու գործը այսպիսի պայմանական գրութեան մէջ լինելով, իհարկէ հիմք չկայ երկիւղ կրելու, թէ այդ տեսութեան կողմից կեանքը որևէ բռնութեան կրենթարկուի: Քանի որ նոր սիստէմը այսպիսի չափաւոր կերպով է

\*) Привилегированная церковь.

հասկացում՝ չեն կարող տեղի ունենալ առանձին երկիւղառիթ մտքեր նրա գործադրութեան հետեանքների նկատմամբ:

Գործն ուրիշ ընթացք կըստանայ, եթէ նոր սիստէմի հետևողական իրականացման վրայ թախանձեն յանուն նոյն սկզբունքի, առանց ի նկատի առնելու, թէ արգետօք զրա համար բաւականաչափ նպաստիչ պայմաններ կան, թէ չկան: Այն ժամանակ այդ սիստէմը կեանքի մէջ գործադրելու դէմ շատ տեսական և գործնական առարկութիւններ հանդէս կըգան: Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու՝ ուշք դարձնենք այս սիստէմի գլխաւոր գրութիւնների վրայ:

Նոր սիստէմի գլխաւոր գրութիւններից մէկն այն է, որ բոլոր կրօնական համախմբութիւնները պետութեան նկատմամբ պէտք է հաւասար գիրքի մէջ գտնուեն և պէտք է մասնաւոր-իրաւական բնաւորութիւն ունեցող միւս համախմբութիւնների հետ մի շարքում լինեն: Միթէ գործադրելի է այս գրութիւնը: Միթէ կարող է պետութիւնը մասնաւոր ընկերակցութիւնների աստիճանին հաւասարցնել այն քրիստոնեայ եկեղեցիները՝ որոնք մինչև այժմ նրա մէջ հասարակական և նոյն իսկ պետական հաստատութեան գիրք են ունեցել, նրա հետ դարերի շարքով կապուած են եղել և նրա վրայ

մեծ ազդեցութիւն են ունեցել: Մի՞թէ բնական է մի մասնաւոր համախմբութիւն համարել այն կրօնական հաստատութիւնը, որ ժողովրդին ուսում և կրօնա-բարոյական դաստիարակութիւն է տալիս և դրա միջոցով զօրաւոր կերպով ազդում է ժողովրդի մտքի և բարքերի վրայ: Մի՞թէ կայ որև նմանութիւն մի մասնաւոր համախմբութեան, որ կազմւում է անդամների կամքով և կառաւարւում նոցա կազմած օրէնսդրութիւնով, և եկեղեցու մէջ, որ մի աստուածային հաստատութիւն է, որի մէջ կանոնադրութիւններն էլ զրուած են աստուածադիր իշխանութիւնից: Մի՞թէ գործնականապէս թոյլատրելի է, որ մի իշխանաւոր անձնաւորութիւն, օրինակ Պրուսիայի թագաւորը, որ լութերական եկեղեցու եպիսկոպոս է համարւում, հաւասարուի մի մասնաւոր ընկերակցութեան ներկայացուցչի աստիճանին: Մի՞թէ խելքի բան է մասնաւոր ընկերակցութիւն համարել, օրինակ, պրուսական կաթոլիկ եկեղեցին, որ զրեթէ ամբողջ աշխարհում տարածուած մեծ եկեղեցու մի մասն է և ենթարկւում է պապին, որ արեւմտեան քրիստոնէութեան գլուխն է, որ երբեմն ինքն էր նշանակում երկրաւոր պետերին, որ մինչև այժմ իւր իրաւունքն է համարում դատել աշխարհական թագաւորներին և ինքը անձամբ չի ենթարկւում աշխարհական

իշխանութեան: Պարզ բան է, որ ոչ մի հիմք չկայ քրիստոնէական եկեղեցիները մասնաւոր իրաւական ընկերակցութիւններին հաւասարեցնելու ենթադրութիւնը իրականացնելու համար: Այդ զուցէ միայն փոքրիկ աղանդների համար իրագործելի լինի, որոնք զուրկ են հասարակական նշանակութիւնից:

Ապա մեր ուշադրութիւնը գրաւում է այն դրութիւնը, որ պետութիւնն անդաւան է (неконфессиональный): Ի՞նչ է նշանակում այս դրութիւնը: Ասում են, թէ այդ չէ նշանակում, որ պետութիւնը անաստուած և անհաւատ լինէր, ինչպէս ասում էին XVIII դարի Ֆրանսիայի ազատ խորհողները (l'Etat est athée): Այս նշանակում է, որ նոր պետութիւնն առանձին համակրանք չունի ոչ դէպի կաթոլիկութիւնը, ոչ էլ բողոքականութիւնը, չի հետաքրքրում նոցա դաւանական առանձնատկութիւններով, այլ միայն ընդունում է քրիստոնէութեան ընդհանուր ճշմարտութիւնները, նրա կենդանի և ներգործող սկզբունքները, որ քրիստոնէական քաղաքակրթութեան հիմք են կազմել: Այս նշանակում է, ասում են, որ նոր պետութիւնն ընդունում է քրիստոնէութիւնն իբրև մի քաղաքակրթական սկզբունք և մերժում է ամենայն եկեղեցականութիւն: Այս պատճառով արեւմտեան Եւրոպայի պետութիւններին, որոնք

արդէն իւրացրել են կրօնին վերաբերուելու նոր սխառեմը, այժմ չէ կարելի ոչ կաթողիկ, ոչ էլ բողոքական անուանել. նոցա յարմար է միայն մի ընդհանուր անուն—քրիստոնեայ պետութիւններ: Այսպէս ուրեմն Եւրոպայի հողի վրայ ևս մենք հանգիստում ենք այն ընդհանուր քրիստոնէութեան, որին պատահեցինք անգրովկիանեան հանրապետութեան մէջ: Բայց Ամերիկայում ընդհանուր քրիստոնէութիւնը դատարկ խօսք չէ, այլ իրական մի փաստ: Այնտեղ, ինչպէս տեսանք, ընդհանուր քրիստոնէութիւնը որոշ ձև ունի. նա ունի իւր աստուածալաշտութիւնը, իւր կապելլանները, աւանդուում է ուսումնարաններում. իսկ Եւրոպայում ընդհանուր քրիստոնէութիւնը առ այժմս միայն լոկ մի խօսք է: Նոր պետութեան սկզբունքները մեկնաբանող նոյն այն գիտնականները՝ որոնք բնորոշում են նրան իբրև քրիստոնէական պետութիւն, ընդունող քրիստոնէութեան հիմնական սկզբունքները, միևս կողմից պարզ ասում են, որ «Նոր պետութիւնը եկեղեցուց դուրս է գտնւում և ոչ թէ մէջը, ուստի և ոչ մի դէպքում չի կապուած եկեղեցու հեղինակութեամբ: Նոյնպէս և եկեղեցու կողմից յարգուած կրօնական յայտնութիւնը ոչ մի ոչ չունի պետական օրէնքի առաջ. պետութիւնը պարտաւոր չէ նոյնպէս իւր օրէնքների մէջ

ընդունել քրիստոնէական բարոյականութեան կանոնները: Պետութիւնն իւր հեղինակութեամբ օրէնքներ հրատարակելիս՝ կատարեալ ազատութեամբ բնորում է այն, ինչ որ արդար է և նպատակաւոր» (Բլիւնչլի): Եթէ աստուածային յայտնութիւնը ոչ մի հեղինակութիւն չունի նոր պետութեան համար, եթէ վերջինս չի քաշոււմ ազատ վարուելու քրիստոնէական բարոյականութեան սկզբունքների հետ, ապա էլ ինչ բան է մնում նրա մէջ քրիստոնէական: Սրանից լետոյ կարող է արդեօք խօսք լինել նրա քրիստոնէական բնաւորութեան մասին: Մենք աւելի միխիթարական եզրակացութեան չենք զայն եթէ քննենք նոր պետութեան գործերը: Նոր պետութիւնն իւր պարտքն է համարում զատել կրօնական տարրերից քաղաքացիական և պետական յարակցութիւնները: Նա, օրինակ, վերացնում է պետական կեանքի հանդիսաւոր դէպքերում կրօնական մաղթանքներն ու օրհնութիւնները, կարևոր չէ համարում պետութեան և կառավարութեան համար եկեղեցական աղօթքները, պատրաստ է ոչնչացնել կրօնական երգումը, եկեղեցական տօների պետական նշանակութիւնը և այլն: Նա ներմուծեց ամուսնութեան անդաւան ձևը \*), որից յաճախ ծնւում են անդաւան տղայք (Պերմանիա). նա սահմանեց անդաւան հասարակական գալրոց-

ներ, ուր (օր. Աւետրիայում) դասատուները և կառավարիչները մեծ մասամբ անտարբեր կամ քրիստոնէութեան թշնամի են, որոնց մէջ դասագրքերը ևս հակակրօնական ուղղութեան են, որոնց մէջ կրօնական առարկաների դասա-  
տուութիւնը յաճախակի նեղոււմ և ճնշոււմ է: Նոր պետութիւնների այս նորամօլծութիւն-  
ների մէջ ինչ կայ քրիստոնէական, ինչքան էլ քրիստոնէութիւնը ընդհանուր մտքով հասկա-  
նալու լինինք:

Բայց եթէ նոր պետութեան ձգտումների և ձեռնարկութունների մէջ համակրութիւն չի երևում գէպի քրիստոնէութեան գաղափարները, ապա ինչ հաւատի է հետևում նա: Նա ունի իւր քաղաքացիական գաւանութիւնը: Պուֆեն-  
գորֆի և Ռուսսօլի ժամանակներից հնարուած է մի քաղաքացիական կրօն, այսինքն հաւատա-  
լիքների մի հաւաքածու, որոնք անհրաժեշտ են իւրաքանչիւր լաւ քաղաքացու համար և կազ-  
մում են համախմբութեան հիմնական բարոյա-  
կան սկզբունքները: Այդ կողէքսը հաւատի 4 յօդուածներից է կազմուած. հաւատ առ Աստուած, հաւատ առ հանդերձեալ կեանք, հա-  
ւատ՝ որ բարին պէտք է վարձատրուի և չարը պատժուի, հաւատ՝ որ սուրբ են քաղաքացիա-  
կան օրէնքները: Այդ հաւատալիքներն ընդհա-

\*) Неконфессиональная форма брака.

նուր են բոլոր պատմական կրօններին, նոքա յատուկ են մարդկային հոգուն: Նոքա կազմում են մի բնական կրօն և պարտադիր պէտք է լինին բոլոր քաղաքացիների համար, ինչ գաւանու-  
թեան էլ նոքա պատկանելիս լինին: Այս կրօնի կողէքսը յարմար է նոր պետութեան համար, որը քրիստոնէաներին և ոչ քրիստոնէաներին գաւանութեան ազատութիւն է տալիս: Պահե-  
լով այս կողէքսը, նոր պետութիւնը չի դաւա-  
ճանում նաև քրիստոնէութեան, որովհետև նրա մէջ պարունակուած ճշմարտութիւնները ընդ-  
հանուր են և քրիստոնէութեան համար և սրա մէջ իհարկէ աւելի լաւ են պարզաբանուած, քան որևէ այլ կրօնում: Հէնց այս հիման վրայ էլ նոր պետութիւնը յաւակնութիւն ունի իրան պահել «քրիստոնէայ պետութեան» անունը:

Բայց ինչքան էլ նոր պետութեան ընդու-  
նած բնական-քրիստոնէական կրօնի գաւանու-  
թեան կողէքսը կարճ լինի՝ այնուամենայնիւ այդ կողէքսը պարտադիր է բոլոր քաղաքացիների համար, ուրեմն մի կրօն է՝ սահմանուած պետու-  
թեան կողմից: Այն ինչ որևէ կրօնական կողէքսի ընդունելը պետութեան կողմից հակառակ է նոր պետութեան սկզբունքներին: Ի՞նչ անել ուրեմն. ինչպէս դուրս գալ այս դժուարութիւնից: Նոր պետութեան սկզբունքները մեկնաբանող գիտ-  
նականներից մէկը նոր պետութեան գաւանած

բնական կրօնն առաջարկում է հասկանալ որ-  
պէս մի tabula rasa, որի վրայ պետութիւնը  
թող է տալիս որ իւրաքանչիւր քաղաքացի գրէ  
ինչ գաւանութիւն որ ուզենայ: Այսպիսով նոր  
պետութիւնը յոյս ունի կատարելապէս անաչառ  
լինել բոլոր գաւանութեանց վերաբերմամբ, և  
միջոց է տալիս, որ խղճի և գաւանութեան  
ազատութիւնը լիովին իրագործուի: Իսկ եթէ  
այնպէս պատահի, որ պետութիւնը քաղաքա-  
կան նպատակների համար անխուսափելի կեր-  
պով ստիպուած լինի օգնութեան դիմելու մի խ-  
կական կրօնի, այն ժամանակ նա կարող է օգ-  
տուել եղած կրօնական հաստատութիւններից—  
կամ քրիստոնէական, կամ հրէական և կամ բուդդ-  
դայական, նախքան թէ որ կրօնի հաստատու-  
թիւնն գործին աւելի յարմարաւոր կըլինի: Նոր  
պետութեան սխտէմի այս ձևը անուանում են  
(Բլիւնչի) պետական-կրօնական ազատութեան  
սխտէմ: Կա մի բնական և հետևողական եզրա-  
կացութիւն է խղճի անպայման ազատութեան,  
որ հիմք է համարուում նոր պետութեան գէպի  
կրօնն ունեցած շարքերութիւնների համար:  
Եթէ նոր պետութիւնը իւրաքանչիւր քաղա-  
քացու տալիս է խղճի և գաւանութեան կատա-  
րեալ ազատութիւն և ուշք չի դարձնում այն  
բանի վրայ, թէ ով ինչ բանի է հաւատում, և  
թէ արդեօք ամեն մարդ հաւատ ունի, ապա

բնական է, որ ինքն իրան ևս չի կարող տալ  
պակաս իրաւունք: Թող ինչ ոչ ոք իմ կրօնի  
մասին չհարցնէ. այդ իմ գործն է և ուրիշ ոչ  
ոքի—ասում է վերջի վերջոյ նոր պետութիւնը:

Ահա թէ ուր է տանում պետութեան ան-  
գաւան լինելու սկզբունքի հետևողական իրա-  
գործումը — պետութիւնը կատարելապէս ան-  
տարբէր է գառնում գէպի ժողովրդի կրօնա-  
կան հոգևոր կեանքը: Բաց գուցէ այդպէս էլ  
պէտք է լինի: Գուցէ պետութիւնը գաւանու-  
թեան ազատութեամբ, կամ աւելի լաւ, գէպի  
հաւասան ունեցած անտարբերութեամբ՝ իւր կոչ-  
ման գազաթնակէտին է կանգնում: Գուցէ կրօ-  
նական ընկերակցութիւնների համար էլ լաւ է,  
որ պետութիւնը նոցանից իւրաքանչիւրին վե-  
րաբերում է իբրև tabula rasa-ի: Այս հարցերը  
լուծելու համար դառնանք պետութեան մասին  
եղած վարդապետութեան: Այդ վարդապետու-  
թեան համաձայն՝ պետութիւնն այնպիսի հաս-  
տատութեանց օրգանիկմ է, որոնք նպատակ  
ունին մի որոշ ժողովրդի թույլատրելի կենսա-  
կան նպատակներին հասնելու նպատակ և մի և  
նոյն ժամանակ աջակցել մարդկային կեանքի  
բոլոր շրջաններին՝ սկսած հատ հատ անձնա-  
ւորութիւններից մինչև ամբողջ հասարակու-  
թիւնը (Մօլ, Պետական գիտութեանց էնցի-  
կլոպեդիա): Մարդուս կենսական նպատակների



մէջ կարևոր տեղ է բռնում նաև կրօնական պահանջին բաւարարութիւն տալը. հետևապէս մարգկային համախմբութեան շրջանների թուին պատկանում է և կրօնական-եկեղեցական շրջանը: Ուրեմն պետութիւնն, ըստ իւր էութեան, կրօնական շրջանը չի կարող իրան մի խորթ բան համարել, ինչպէս այդ անում է նոր պետութիւնը, չի կարող իւր մէջ գտնուող կրօնի գործը մասնաւոր՝ իրան չվերաբերող գործ համարել: Ապա պետութեան՝ իբրև մի օրգանիզմի մասին եղած գաղափարից հետևում է, որ նրա մէջ գտնուող բոլոր հաստատութիւնները պէտք է միմիանց վերաբերմամբ ներգաշնակ և համերաշխ յարաբերութիւն ունենան, օրգանիզմի անդամների նման: Պետութեան կազմուցքի մէջ գտնուած այս կամ այն հաստատութիւնը կարգաւորող մասնակի նօրմաները չպէտք է իրար հակասեն, որովհետև մարդուս բնութիւնը, որից այդ նօրմաները բղխում են և որի վերայ իրանց գործունէութիւնն են տարածում, իւր մէջ ոչ մի հակասութիւն չի ընդունում: Գործը միայն անբաւարար հասկանալու պատճառով կարող են հակասութիւններ պատահել մասնակի կենսական շրջաններին վերաբերեալ օրէնքների մէջ: Գրա համար պետութիւնն ենթարկուում է մարգկային կեանքը որոշող բոլոր տարբեր օրէնքներին, հետևապէս իրաւական, բարոյական, կրօ-

նական օրէնքներին և խոհականութեան կանոններին: Սոցա միմիանց հետ համաձայնեցնելը գործնական բանականութեան և զիտութեան գործն է (Մօլ): Այսպիսով դարձեալ դուրս է գալիս, որ չի կարելի ասել, ինչպէս որ գիտնականների վիպութեամբ նոր պետութիւնը ասում է, որ իբրև թէ նրա համար ոչ մի հեղինակութիւն չունին ոչ Աւետարանը և ոչ բարոյական-քրիստոնէական կանոնները: Այս քիչ է: Պետութիւնը ամենից քիչ կարող է զանց առնել հէնց կրօնական բարոյական սկզբունքները, որոնցով ապրում է ժողովուրդը: Իւրաքանչիւր պետութիւն՝ նման լինելով ուրիշ պետութեանց իւր հովանաւորած կենսական նպատակների և խնդիրների միատեսակութեամբ, միևնույն ժամանակ ունի և իւր ինքնուրոյն բնութիւնը, որ կախուած է կենսական նպատակներին տարբեր բաւարարութիւն տալուց, ժողովրդի գաւանած գաղափարների տարբեր կերպարանքից, մի խօսքով ժողովրդի առանձնայատուկ քաղաքակրթութիւնից: Քաղաքակրթութեան որոշ բնաւորութիւնը անհրաժեշտաբար ազդում է նաև թէ պետութեան օրգանիզմի մէջ գտնուող հաստատութիւնների և թէ իւր՝ պետութեան բնաւորութեան վրայ: Իսկ քաղաքակրթութեան գլխաւոր հիմքը միշտ եղել է և է ժողովրդի կրօնը: Կրօնով է գլխաւորապէս որոշուում ժողովրդի

աշխարհայեցողութիւնը: Կրօնի տուած բարոյական կանոններն են իրաւական կարգի\*) Տիմքը: Այս բոլորը ընդհանուր ընդունուած ճշմարտութիւններ են: Եթէ այդպէս է, ուրեմն դարձեալ հետեւում է, որ պետութեան համար կրօնը չի կարող անտարբեր և օտար մի բան համարուել: Իսկ եթէ նոր պետութիւնն այնուամենայնիւ անտես է առնում ժողովրդի կրօնը, այդ նշանակում է թէ նա ցանկանում է մի նոր քաղաքակրթութիւն մտցնել, որ հիմնուած կըլինի ոչ թէ ժողովրդի կրօնի վերայ, այլ բնական, ընդհանուր մարդկային կամ, աւելի ճիշտ, արուեստական կերպով քաղաքացիական նիստ ու կացի համար կազմած կրօնի վերայ կամ ուղղակի դէպի կրօնն անտարբեր վերաբերմունքի վրայ: Եւ իրօք այդպէս էլ է: Եկեղեցական-հասարակական շարաբերութեանց վերաբերեալ նոր պետութեան բոլոր կարեւոր ձեռնարկութիւնները վկայում են նորա նոր քաղաքակրթական սկզբունքի մասին: Աերցնենք, օրինակի համար, քաղաքացիական ամուսնութիւնը: Ամուսնութեան պարտադիր քաղաքացիական ձևը օրինաւոր դարձնելով, պետութիւնն ամուսնութեան վրայ նայում է, որպէս քաղաքացիական մի ակտի վրայ: Պետութիւնն անտես է առնում, թէ ո՞վ է նայւում ամուսնութեան վրայ. չի ար-


\*) Правовой порядокъ.

գելում, որ ցանկացողը եկեղեցական պատկազրութիւնն ևս կատարէ. բայց պակի կրօնական ծէսը մասնաւոր մի գործ է, նրա մասին եղած վարդապետութիւնը իւրաքանչիւրի խղճի գործ է: Իսկ ամուսնութեան իսկական նշանակութիւնը, ըստ պետութեան վարդապետութեան՝ այն է, որ նա մի քաղաքացիական ակտ ճանաչուի: Պարզ է, որ մենք գործ ունինք այստեղ նոր պետութեան քարոզած քաղաքակրթական սկզբունքներից մէկի հետ: Այս տեսակի մի երկրորդ օրինակն է անդաւան դպրոցը: Նոր պետութիւնը հիմնելով այսպիսի դպրոցներ, յարզ վկայում է, որ իւր համար հարկաւոր և բնական է, այսպէս կոչուած, աշխարհական ուսումը, որ ազատ է կրօնական տարրերից. իսկ կրօնի ուսուցումը և կրօնական-բարոյական կրթութիւնը մասնաւոր և ընտանեկան մի գործ է համարում: Բանից դուրս է գալիս, որ նոր պետութեան դէպի կրօնն ունեցած շարաբերութիւնն հասարակ անտարբերութիւն չէ, այլ միտումաւոր անտարբերութիւն: Գուրս է գալիս, որ նոր պետութեան tabula rasa-ի վրայ պարզ արձանագրուած է նոր սկզբունքը՝ կրօն չպէտք է լինի ոչ քաղաքացիական և ոչ քաղաքական յարակցութիւնների մէջ:

Այժմ հեշտ է պատասխան տալ մեր դրած վերջին հարցին՝ նոր պետութեան դէպի եկե-

ղեցին ունեցած յարաբերութեան սկզբունքներէ ճշտեալական ներմուծումից ինչ պէտք է սպասեն կրօնն ու եկեղեցին: Մարդս անկարող է իւր աշխարհայեցողութեան և սկզբունքների մէջ երկուանալ, ինչպէս, ըստ երևոյթին, ենթադրում է ճոր պետութիւնը: Մարդս երկար չի կարող մնալ երկու տարբեր, տարասեռ քաղաքակրթութեանց կիցքի վերայ: Նա չի կարող միեւնոյն ժամանակ հաւատալ Աստուծոն, սուրբ Աւետարանին և ընդունել Աստուծոյ օրէնքին հակառակող պետական օրէնքների սրբութիւնը: Մարդս դժուարութեամբ կը կարողանալ հաւատ սովորել՝ հաւատն անտես առնող կամ հաւատին ուղղակի հակառակ դիրք բռնող դպրոցի մէջ դաստիարակուելուց լետոյ: Նրան աւելի ծանր պէտք է թուան կրօնի պահանջները, երբ քաղաքացիական համախմբութիւնը ազատած կը լինի դոցանից թէ նրան և թէ իրան: Առհասարակ, մարդս չի կարող միաժամանակ հաւատար եռանդով երկու տէրանց ծառայել: Այժմ նոր պետութեան քարծուներութեան գեռ սկիզբն է: Բնական է, որ ընդհանուր առմամբ գեռ ևս նա պահում է քրիստոնէութեան առաջուայ գծերը. գարմանալի չէ և այն, որ նա գեռ ցանկանում է «քրիստոնէական» կոչուել, թէև պայմանական մտքով: բայց բաւական է որ անցնեն երկու երեք սերունդ՝ կրթուած անկրօն քաղաքակրթու-

թեան սկզբունքներով և հաւանօրէն այլ ևս կարիք չի լինի, որ նոր պետութիւնն «քրիստոնէական» տիտղոսով դիմակաւորէ իրան: ձիշտ են նկատում նոյն իսկ նոր պետութեան երկրպագուները, որ այն կրօնական հանգուրժողութիւնը, որ ծագում է դէպի կրօնն տաճած անտարբերութիւնից, շատ մօտ է հալածանքի, և որ կրօնի դէմ եղած թշնամութեան ամենալուսնագաւոր ձևը անտարբերութիւնն է:






## Վ Ի Գ Ե Կ Ն Ե Բ

էջ	տող.	տպուած է	ուղիղը
12.	վ. 12	Տիմարիւթիւնը	Տիմարիւթը
19.	ն. 1	Տ. մ. նահանգները	Տ. Ամերիկայի Նահանգները
20.	վ. 9	Իրօք . . . . .	Իրօք նաքա
22.	վ. 4	պետութիւն . . .	պետութեան
—	— 12	Տամար . . . . .	Տամար, . . .
23.	վ. 6	Տիմարիւթիւնը.	Տիմարիւթը
30.	վ. 1	օրէքը . . . . .	օրէնքը . . .
32	ն. 10	Տ. . . . .	Տ. Ա.
69.	վ. 14	ультрамонтанная	ультрамон- танизмъ.
74.	ն. 14	պաշտօնական . .	պաշտօնային
94.	ն. 7	և Արեւտեան Եւ- րոպայի	Արեւտեան Եւրոպայի և





«Ազգային գրադարան»



NL0202052

